«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՌՈՒՍ–ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

2008

«ՍԵՎԱՆԻ ԿՐԵԱՏԻՎ ԽԱՂ»ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ

26–28 սեպտեմբերի 2008 թ. Սևան, Հայաստան

Ծրագրի մասնակիցները իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամին ֆինանսական աջակցության համար, որի շնորհիվ հնարավոր դարձավ ինչպես փորձագիտական խորհրդակցության կազմակերպումը, այնպես էլ սույն փաստաթղթի հրատարակումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՌՈՒՍ–ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

**«ՍԵՎԱՆԻ ԿՐԵԱՏԻՎ ԽԱՂ»
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ**

**26–28 սեպտեմբերի 2008 թ.
Սևան, Հայաստան**

2008 թ. սեպտեմբերին Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնը հանդես եկավ ռուս–վրացական հակամարտության արդյունքում տարածաշրջանում ստեղծված իրավիճակի խորքային քննարկման նախաձեռնությամբ: Քննարկումը ընդգրկեց այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայ–թուրքական հարաբերություններում նշմարվող նոր մոտեցումները, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և Հայաստանի ներքաղաքական իրավիճակը: Քաղաքացիական մասնակցությունը խթանելու և քաղաքացիական պատասխանատվությունը բարձրացնելու նպատակ հետապնդող այս նախաձեռնությունը, ստանալով Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամի (ԵՀՀ) աջակցությունը, վերածվեց եռօրյա փորձագիտական խորհրդակցության, որը անցկացվեց մտագործունեական[1] (կրեատիվ) խաղի մեթոդաբանության կիրառմամբ: Խորհրդակցությանը մասնակցեցին մոտ 30 փորձագետներ՝ քաղաքագետներ, սոցիոլոգներ, քաղաքացիական ծառայողներ, քաղաքացիական հասարակության, գիտության, մշակույթի և կրթության ներկայացուցիչներ:

[1]Սա հատուկ մեթոդ է, որը կիրառվում է անորոշության բարձր աստիճանով բնութագրվող իրավիճակներում որոշումներ կայացնելու արդյունավետությունը ապահովելու համար:

Փորձագիտական խորհրդակցություն

Փորձագիտական խորհրդակցությունը անցկացվեց 2008 թ. սեպտեմբերի 26—28–ին կոլեկտիվ մտագործունեության կազմակերպման ոլորտում մասնագիտացած մեթոդաբանների կողմից: Կոլեկտիվ մտագործունեության կազմակերպումը նորարարական մեթոդ է, որը թույլ է տալիս խմբային քննարկումների, խմբային աշխատանքի ներկայացման, հնարավոր սցենարների վերլուծության հիման վրա ստեղծել ընդհանուր ինտելեկտուալ դաշտ և մտքի աշխատանքը մշտապես «որոնման ռեժիմի» մեջ պահել՝ արդյունքում ստանալով ճգնաժամային միտումները փոխելու նորարարական առաջարկներ: Մեթոդաբանների թիմը կազմում էին Նունե Դիլանյանը (ԵՊՀ դասախոս, բանասեր, «Միջնաբերդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ), Դավիթ Հովհաննիսյանը (արևելագետ, մշակութաբան, դեսպան), Գևորգ Տեր–Գաբրիելյանը (Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամի տնօրեն), լրագրող Դավիթ Պետրոսյանը և քաղաքագետ Արա Նեդոլյանը:

Բաժանվելով չորս թեմատիկ խմբերի՝ խորհրդակցության մասնակիցները երեք օր քննարկում էին իրավիճակը նախապես տրված դիրքերից, որոնց ընտրությունը պայմանավորված էր Հարավային Կովկասում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններով: Խմբերի առջև խնդիր էր դրված ամեն օր ներկայացնել կոլեկտիվ վերլուծության արդյունքները գծանկարների միջոցով, իսկ խորհրդակցության վերջում ամփոփել աշխատանքի արդյունքները առաջարկների տեսքով: Խմբերը աչքի էին ընկնում

մասնագիտական բազմազանությամբ և «ներկայացուցչականությամբ», ինչը նպաստում էր խմբային աշխատանքի դինամիկ զարգացմանը: Կրեատիվ խաղի մեթոդը թույլ էր տալիս հաջողությամբ հաղթահարել մտավոր հաղորդակցման ընթացքում հաճախ առաջացող արգելքներն ու սահմանափակումները:

Խմբերին առաջարկվել էին հետևյալ դիրքերը.

(1) Գլոբալ և տարածաշրջանային ուժերն ու միտումները

Ի թիվս այլ հարցերի այս խումբը պետք է պարզաբաներ, թե ինչ ուժեր են գործում տարածաշրջանում, թե դրանցից որոնք են տարածաշրջանային և որոնք են գլոբալ խաղացողներ:

(2) Գլոբալ աշխարհ և գլոբալ քաղաքականություն

Այս խմբի օրակարգը ընդգրկում էր հետևյալ հարցերը. որո՞նք են համաշխարհային զարգացման հիմնական միտումները. գլոբալացո՞ւմը, «գլոկալացո՞ւմը», ռեգիոնալացո՞ւմը: Ինչպիսի՞ն է լինելու ապագայի աշխարհը:

(3) Անվտանգություն (Աշխարհի, տարածաշրջանի, Հայաստանի)

Այս խումբը, մասնավորապես, փորձում էր պարզել, թե արդյո՞ք փափուկ ուժը հաղթում է կոշտ ուժին. փոխվե՞լ է արդյոք ահաբեկչության սպառնալիքը վերջին տարիներին ծավալված հակաահաբեկչական գործունեության արդյունքում. ի՞նչն է պետք դիտարկել սպառնալիք Հայաստանի անվտանգությանը և ինչպե՞ս է դա հարաբերվում գլոբալ անվտանգությանը:

(4) Գլոբալ և տարածաշրջանային ենթակառուցվածքներ

Այս խմբում քննարկումը կենտրոնացած էր հետևյալ հարցերի վրա. ո՞րն է ենթակառուցվածքների դերը Հայաստանի, տարածաշրջանի՝ որպես միասնական միավորի և գլոբալացման միտումների զարգացումն ապահովելու հարցում. որո՞նք են բազմամյա ենթակառուցվածքային շրջափակումից դուրս գալու ճանապարհները. ինչպե՞ս լուծել այս խնդիրը:

Փորձագիտական խորհրդակցության մասնակիցներին առաջարկվել էին նաև օրվա թեմաներ, որոնք մասամբ հատվում էին խմբերի դիրքերի հետ: Առաջին օրվա թեման ընդգրկում էր **գլոբալ ենթակառուցվածքների և տարածաշրջանային անվտանգության** հարցերը. երկրորդ օրը նվիրված էր **պետություններին և ցանցերին, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության մոդելներին**. երրորդ օրվա աշխատանքը կենտրոնացած էր **տարածաշրջանային հակամարտությունների** և խնդիրների լուծմանն ուղղված **կոնկրետ նախագծերի ու ծրագրերի** քննարկման վրա: Նեղ մասնագիտական մոտեցումներից խուսափելու նպատակով խորհրդակցության ձևաչափը մշակված էր այնպես, որ լուծումների որոնման ընթացքում ապահովվի խնդիրների բազմակողմանի դիտարկումը:

Խորհրդակցությունը հարստացվեց հետևյալ ներածական զեկույցներով[2].

1. Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը. Աղբյուրները, զարգացման հնարավոր մոդելները և տեսությունը, ինչպես նաև հնարավոր ազդեցությունը Հայաստանի վրա, զեկուցող՝ Արտաշես Թերզյան, ներդրող բանկիր:

[2] Տե՛ս հավելվածում:

2. Չճանաչված կազմավորումների քաղաքականության հնարավոր փոփոխությունները ռուս–վրացական պատերազմի լույսի ներքո, զեկուցող՝ Դավիթ Պետրոսյան, «Նոյան Տապան» լրատվական գործակալության քաղաքական մեկնաբան:

3. Հայաստանի Հանրապետության ներկայիս պաշտոնական քաղաքականությունը տարածաշրջանային նոր զարգացումների լույսի ներքո (բաց տեղեկատվական աղբյուրների հիման վրա), զեկուցող՝ Վահան Տեր–Ղևոնդյան, դիվանագետ:

4. Գլոբալ քաղաքական միտումները և դրանց ազդեցությունը տարածաշրջանի վրա, զեկուցող՝ Դավիթ Հովհաննիսյան:

5. Միջազգային հանրության՝ բարեփոխումներին և պետականության կառուցմանն ուղղված ներդրումը Հայաստանում, զեկուցող՝ Գևորգ Տեր–Գաբրիելյան:

6. Աշխարհաքաղաքական և քաղաքական իրավիճակը տարածաշրջանում ռուս–վրացական պատերազմի հետևանքների համատեքստում, զեկուցող՝ Աղասի Ենոքյան, քաղաքագետ, Քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն:

Բարդ գաղափարների, հայեցակարգերի և միտումների խորքային վերլուծությունն ապահովելու համար պահանջվում էր խորհրդակցության կազմակերպման նորարարական մեթոդ, և այդպիսին դարձավ կրեատիվ խաղերի մեթոդը, որը թույլ տվեց մասնակիցներին անարգելք փոխանակել գաղափարները՝ հաղթահարելով մտածողության իներցիան և նոր, անսպասելի տեսանկյուններից դիտարկելով խնդիրները: Արդյունքում քննարկվեցին, մշակվեցին և ձևակերպվեցին այսօրվա խնդիրներին և մարտահրավերներին նոր մոտեցումներ ներկայացնող առաջարկներ:

Հանդիպման մասնակիցները ստեղծեցին իրենց բառարանը, մտցրեցին մի շարք նոր հասկացություններ. «հակաֆիլտր», «ցանցայնացում», «Միստեր Իքս», «և այլն», «գլոբալ խաղացող», որոնց մի մասը ավելի մանրամասնորեն կքննարկվի առաջարկների բաժնում: Ավելին՝ հաշվի առնելով աշխարհի զարգացման վերջին միտումները, որոշ ոչ միանշանակ ձևով ընկալվող և վեճերի առարկա հանդիսացող հասկացություններ, մասնավորապես

«իշխանություն», «ցանց», «ենթակառուցվածք», «պետություն», «հիերարխիա» և «տարածաշրջան» հասկացությունները նորովի սահմանվեցին:

Հայաստանի առջև ծառացած որոշ խնդիրների դիտարկումը գլոբալ միտումների ընդհանուր համատեքստում

1. Գլոբալ միտումներ

Խորհրդակցության մասնակիցները առաջարկեցին գլոբալ միտումները դիտարկելու առանձնահատուկ տեսանկյուն, որի ամփոփ պատկերը բերվում է ստորև:

Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված միջազգային հարաբերությունների համակարգը շարունակում է լուրջ փոփոխությունների ենթարկվել, ինչը տեղի է ունենում այն պատճառով, որ այլևս անհնար է դարձել ապահովել դրանց հետագա «սառեցումը» սառը պատերազմի կարծրատիպերի շրջանակներում:

Եթե ԽՍՀՄ փլուզումից հետո «պատմության վերջը» կանխատեսող գաղափարները դեռ կարող էին ուշադրություն գրավել, ապա սեպտեմբերի 11–ի իրադարձությունները խորհրդանշեցին ոչ միայն աշխարհին սպառնացող նոր վտանգը, այլև միջազգային կազմակերպությունները աստիճանաբար վերափոխելու, այլ ոչ թե էապես (բայց ոչ բռնի ձևով) փոխելու գաղափարի վերանայման խիստ անհրաժեշտությունը: ՆԱՏՕ–ի

ընդլայնումը գալիս է ապացուցելու, որ միջազգային կազմակերպությունների փոփոխության գաղափարի հետ ոչ ոք հաշվի չնստեց:

Ընդլայնված Եվրամիությունը բնականաբար կանգնեց իր նոր սահմաններում կարգավորվելու անհրաժեշտության առջև, և պարզ է, որ այս գործընթացը ժամանակ կպահանջի: ՆԱՏՕ–ի ընդլայնումը, որը սկզբնական փուլում վտանգավոր չէր թվում, համադրվելով այլ գործոնների հետ, ստիպեց Ռուսաստանին կտրուկ ձևով հակադրվել աշխարհին: Մի շարք այլ իրադարձությունների արդյունքում որոշակի փոփոխությունների ենթարկվեցին նաև 20–րդ դարի համար ավանդական թուրք–ամերիկյան հարաբերությունները:

Ազգերի ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության հարցում ՄԱԿ–ի հակասական դիրքորոշումը, որը որդեգրվեց նաև այլ կազմակերպությունների կողմից, ունեցավ այն հետևանքը, որ ո՛չ ՄԱԿ–ը և ո՛չ էլ այլ գլոբալ խաղացողները (ինչպես, օրինակ, ԵԱՀԿ–ն) այլևս անկարող են համարժեք արձագանք տալ մշտապես առաջացող նոր խնդիրներին:

Այս ամենը ազդում է Հայաստանը ընդգրկող տարածաշրջանի վրա, որտեղ էլ ուրվագծվեն այդ տարածաշրջանի սահմանները: Հետզհետե տարբեր տարածաշրջանային խաղացողները կորցնում են իրենց հարգանքը կայունության՝ որպես արժեքի հանդեպ, որովհետև այն զրկում է նրանց դրված նպատակներին հասնելու հնարավորությունից:

Կայունությունը, որի բաղադրյալներից մեկը կարելի էր համարել հակամարտությունների սառեցման քաղաքականությունը, աստիճանաբար դուրս է մղվում այն կարգի ակտիվությամբ, որը, ապասառեցնելով հակամարտությունները, ոչ միայն չի լուծում ծառացած խնդիրները, այլև ավելի անկայուն է դարձնում ինչպես տարածաշրջանը, այնպես էլ միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգը:

Արդյունքում միջազգային կազմակերպությունների և միջազգային հանրության ջանքերը էական առաջընթաց չեն արձանագրում, քանի որ տարբեր խաղացողների, ընդ որում թե՛

պետությունների և թե՛ ցանցերի վարքագծում գնալով ավելի քիչ է նշմարվում միջազգային չափանիշներին հետևելու միտումը:

Չափանիշները դառնում են զուտ մեկնաբանության հարց, ինչը չնպաստում է աշխարհում անարխիայի էական աճին: Այս միտումները առավել ցայտուն ձևով են դրսևորվում Հայաստանը ընդգրկող տարածաշրջանում:

Վերը նշվածը ապացուցվում է նաև այն փաստով, որ «ճանաչում» հասկացությունը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո մեծ կշիռ էր ձեռք բերել միջազգային հարաբերություններում և որը առաջնային արժեք է Հայաստանի համար (հայերի ցեղասպանության ճանաչումը, ԼՂ ինքնորոշման իրավունքի ճանաչումը կամ ԼՂ որպես անկախ պետության ճանաչումը) աստիճանաբար արժեզրկվում է, մանավանդ Կոսովոյի ճանաչումից և Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումից հետո: Այս ամենը էլ ավելի է ապակայունացնում Հայաստանի վրա անմիջականորեն ազդող աշխարհը, հատկապես հաշվի առնելով Հայաստանի նպատակներն ու ձգտումները:

2. Պետություններ versus ցանցեր

Միջազգային արքուբարքի այն սկզբունքները, որոնք սառեցվել էին սառը պատերազմի ընթացքում, այսօր ապասառեցվում են, ինչը կարող է պատրանք ստեղծել, որ պետությունները վերադարձել են 19–րդ դարին հատուկ գործունեության

ոճին: Աշխարհի նման պարզեցված՝ որպես միայն պետությունների աշխարհի ընկալումը ազդում է ինչպես գլոբալացման գաղափարի, այնպես էլ գլոբալ արժեքների վրա: Սակայն սխալ է կարծել, թե աշխարհը առաջընթաց վիճակից դեպի հետ է գնում (բացառությամբ այն իրավիճակների, երբ մարդն իր ձեռքով լայնածավալ աղետներ է առաջացնում, սակայն տվյալ դեպքում խոսքն այդ մասին չէ): Իրականում ինչպես պետականության, այնպես էլ միջազգային հարաբերությունների կառուցման ներկայիս գործընթացները պետք է հաշվի առնեն գլոբալացման միտումները:

Ըստ խորհրդակցության մասնակիցների, պետական շինարարությունն իր հին իմաստով համազոր է հիերարխիկ իշխանական կառույցների ստեղծմանը, որոնցում բուրգային հարաբերությունները շարվում են վերից վար. ուղղակի բռնի ազդեցությունից՝ պարտադրման տարբեր միջոցների կիրառմամբ մինչև կորուստներ և պարտություններ: Նման հարաբերությունները կառուցվում են այն շրջանակային ենթադրությունների հիման վրա, թե տվյալ դեպքում գործում են զրոյական գումարով խաղի կանոնները:

Պետական շինարարության ժամանակակից հայեցակարգը պետք է հաշվի առնի, որ ցանցերը առաջարկում են փոխշահավետ հարաբերությունների կառուցման մի շարք նոր սկզբունքներ: Եթե պետական ենթակառուցվածքների «արյունը» ուժն է, ապա ցանցային ենթակառուցվածքներում այդ դերը իր վրա է վերցնում փոխշահավետությունը: Գործում են նաև ցանցերի ազատ ընտրության և հատուկ ֆիլտրերի գործոնները, որոնց միջոցով այս կամ այն մասնակիցը ընդունվում կամ մերժվում է:

Այսպիսով, պետությունները, եթե ցանկանում են գոյատևել ցանցերի և այլ պետությունների հետ մրցակցային պայքարում, պետք է ընդունեն «ցանցայնացման» անհրաժեշտությունը:

Այս ամենից բխող հակիրճ հետևությունը, մասնավորապես, կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. պետությունների կողմից ձեռնարկած որևէ անազնիվ և անարդար պարտադրանք կամ ուղղակի բռնություն չի կարող երկարատև լինել, քանի որ կլուծի ոչ թե

ռազմավարական, այլ մարտավարական նշանակություն ունեցող խնդիրը: Էական չէ, թե որքան կդիմանա պարտադրանքի վրա հիմնված համակարգը: Էականն այն է, որ նման համակարգը ի սկզբանե դատապարտված է, քանի որ գլոբալ աշխարհում, մի կողմից, հնարավոր չէ որևէ բան երկար ժամանակ գաղտնի պահել, իսկ մյուս կողմից՝ անհնար է արգելել ինֆորմացիայի, գաղափարների, ապրանքների և մարդկանց ազատ հոսքը:

3. Ներքին և արտաքին խնդիրների փոխկապակցվածությունը

Վերը նշվածը թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգման. Հայաստանը մուտք է գործում իր համար նոր և գրեթե անծանոթ աշխարհ որպես երկակի որակ կրող միավոր, այն է՝ որպես միջազգային հանրության լիիրավ անդամ, որը միևնույն ժամանակ շարունակում է մնալ կոռումպացված, հետ ընկած, «ուշացած» և արժեքային իմաստով էական բարեփոխումներ չդրսևորող (ինչը, մասնավորապես, ապացուցվեց վերջին նախագահական ընտրություններով և դրանց հաջորդած իրադարձություններով), և այս հանգամանքը ստեղծում է երկրի համար չափազանց վտանգավոր գործոնների մի խառնուրդ, որն ավելի հավանական է դարձնում երկրի հետագա ապակայունացումը:

Այն, որ լուրջ արտաքին վտանգի առկայության դեպքում ներքին քաղաքական հակամարտությունը պետք է զոհաբերվի՝ դրսից եկող սպառնալիքները մեղմելու համար, հաճախ կիրառվող փաստարկ է, որը առաջ է քաշվել թե Հայաստանում, թե այլ

երկրներում: Գաղտնիք չէ, սակայն, որ հենց ներքին համակարգի թուլությունն է դարձնում Հայաստանը չափազանց խոցելի արտաքին ճնշումների առումով, ինչը նորից ու նորից գալիս է հաստատելու, որ անհրաժեշտ է ամրապնդել և հզորացնել ներքին կառավարման համակարգը: Իսկ դա իր հերթին հնարավոր է անել միայն ապահովելով ակտիվ քաղաքացիական մասնակցությունը կառավարման գործընթացներում:

Բոլոր խնդրահարույց ոլորտներում՝ լինի դա վնասակար արտադրության զարգացումը, քաղաքաշինությունը, որն ազդում է շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա, կոռումպացված և ուռճացաց բյուրոկրատական համակարգը, արդյունաբերական հզորությունների բացակայությունը, գործազրկությամբ պայմանավորված արտագաղթը, ոչ թափանցիկ գործարար հարաբերությունները և պետական քաղաքականությունը, զարգացման որակին մեծ վնաս հասցնող կաշառակերությունը առողջապահության և կրթության ոլորտներում – ամենուրեք այս ոլորտների հետ առնչվող Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի պետք է մտածի ապագա սերունդների մասին և իր սեփական վարքագիծը կողմնորոշող արժեքային համակարգ ստեղծի՝ բանակցելով և համաձայնության գալով ուրիշների հետ:

Դրսից՝ որպես զսպաշապիք ներկրված արժեքային համակարգը չի կարող լուծել և չի լուծի խնդիրները:

Պետությունը ի վիճակի չէ իր վրա վերցնել նոր արժեքային համակարգի ստեղծումը: Այդ առաքելությունը հասարակության ուսերին է դրվել: Սակայն այդ գործընթացին պետք է նախորդի այնպիսի վերնախավի ստեղծումը, որը կուղղորդվի քաղաքական, տնտեսական, ֆինանսական, մշակութային և միջազգային շրջանակները ներկայացնող ուսյալ և լուսավորված լիդերների կողմից:

4. Սփյուռքը և պետական շինարարությունը

ԽՍՀՄ փլուզումից հետո շատերը Հայաստանում սկսեցին դիտարկել սփյուռքը որպես համադարման: Սակայն տասնհինգ տարի անց ակնհայտ դարձավ, որ հատվածական ներգրավվածությունը Հայաստանի գործերում և տարերայնորեն կատարվող ներդրումների առանձին օրինակները առայժմ չեն ստեղծել այն նախադրյալները, որոնք թույլ կտային դիտարկել սփյուռքը որպես զարգացման կարևոր ռազմավարական ռեսուրս:

Մի քանի տարի առաջ նմանատիպ միջոցառման ընթացքում մշակվեց «ցանցապետության» հայեցակարգը, որում հաշվի էր առնվել գլոբալ աշխարհի՝ ցանցերի ստեղծման և զարգացման միտումը և որը դիտարկում էր հայերին որպես իր իրավասությունների «ծածկույթը» աշխարհով մեկ տարածելու հնարավորություն ունեցող մի ազգ, եթե այն կարողանա ճիշտ ձևով կազմակերպել իր սփյուռքի կարողությունները:

Անկախության տարիների ընթացքում գործող կառավարությունները որոշ ջանքեր գործադրել են սփյուռքը Հայաստանի զարգացման համակարգված գործոն և Հայաստանին հուզող խնդիրները միջազգային մակարդակում առաջ տանելու համար ռեսուրս դարձնելու ուղղությամբ: Այդ ջանքերի շարունակությունը դարձավ այն, որ ներկայիս կառավարությունը սփյուռքի հարցերով նախարարություն ստեղծեց:

Այդուհանդերձ խորհրդակցության մասնակիցները չափազանց դիպուկ ձևակերպում տալով սփյուռքի ազդեցությանը Հայաստանի վրա, բնութագրեցին այն որպես «ամպ». Երբ անձրև է գալիս, այն օգտակար է, սակայն ոչ ոք չի կարող նախապես իմանալ, թե երբ կգա այդ անձրևը: Անձրևը տարերային երևույթ է:

5. Հայաստանը և աշխարհը

Թեև Հայաստանի առջև բազմաթիվ խնդիրներ են ծառացած, այն կարող է կապիտալացնել իր որոշակի «խորշային» նշանակությունը:

Ընդունված է համարել, որ Հայաստանի հիմանակն ռեսուրսը նրա մարդկային ռեսուրսն է: Մարդիկ արտահանման հիմնական առարկան են և երկրի հիմնական ներքին ուժը, քանի որ ունեն լավ կրթություն մի շարք այլ երկրների բնակչության համեմատ և դրսևորում են իրենց ունակությունները գործունեության տարբեր ոլորտներում: Այդպես է դա թե ոչ, այդ ռեսուրսների շնորհիվ, թե այլ, սակայն Հայաստանը, ունենալով գործելու սահմանափակ հնարավորություններ, կարող է հարմար «փորձադաշտ» դառնալ աշխարհում ամենաառաջավոր և նորարարական ներդրումների համար, լինեն այդ ներդրումները տեխնոլոգիաների, կրթության, մենեջմենթի թե կառավարման ոլորտներում: Եթե Հայաստանը ցանկանում է տանուլ չտալ մրցակցային պայքարում, այն պետք է պատրաստ լինի իր վրա վերցնելու նորարարական գործընթացների նախաձեռնության ու յուրացման ռիսկը և խիզախությունը: Այն կարող է դառնալ յուրօրինակ գործարկման հարթակ՝ աշխարհի քաղաքացիների (կամ, ըստ Յոհան Գալթունգի՝ Alfa-անձանց) կայացման գործընթացը ուսումնասիրելու համար, այսինքն՝ այն անձանց, որոնք, չկորցնելով ամենանվիրականը՝ լոկալ, ազգային և էթնիկ ինքնությունը և արժեքները, միևնույն ժամանակ ընդունում և յուրացնում են ժամանակակից համամարդկային արժեքները, դրանով իսկ ավելի ամրապնդելով և պաշտպանելով իրենց ինքնությունը: Սփյուռքի առկայությունը հնարավորություն է տալիս Հայաստանին ստեղծելու նման անվտանգ արժեքային համակարգ և, ետևում թողնելով գոյատևման խնդիրը, ընթանալ

առաջ՝ դեպի գլոբալ ազդեցության գաղափարախոսությունը: Ներկայումս հայրենիք–սփյուռք հարաբերությունները բնութագրվում են որպես «ցանցաբարեկամական»: Այսուհետև պետք է ձգտել վերածելու դրանք գլոբալ «ցանցահասարակական» հարաբերությունների:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վերը նշվածի հիման վրա փորձագիտական խորհրդակցության ընթացքում մշակվեցին ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային հանրությանը հասցեագրված առաջարկներ[3]:

1. Միջազգային հանրությանը հասցեագրված առաջարկներ

Միջազգային հանրության մասնակցությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ սահմանակից տարածաշրջանի զարգացման գործընթացներում ունի մի թերություն, որը կարելի է անվանել «մասնաբաժան» մոտեցում, այն է՝ ամբողջական ռազմավարության բացակայություն: Պատճառն այն է, որ ռազմավարության տարբեր օղակները կառուցվածքային առումով բաշխվել են և շարունակում են բաշխվել տարբեր բաժանմունքների և գործող անձանց միջև: Եվ սա տեղի է ունենում մոտեցումների

[3] Փորձագիտական խորհրդակցության ընթացքում կիրառված մեթոդաբանությունը բացառում է խորհրդակցության ավարտից հետո անվանական հղումներ անելու հնարավորությունը և այս առումով որոշ նմանություն ունի Չաթեմ Հաուզում ընդունված կանոնների հետ: Խորհրդակցության արդյունքները մշակված են միասնաբար և հավասարաչափ կարող են վերագրվել յուրաքանչյուր մասնակցին: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ առաջարկների վերջնական ձևակերպումը կատարվել է հանդիպման կազմակերպիչների կողմից խորհրդակցության հիման վրա և համաձայնեցվել է մասնակիցներից շատերի, սակայն ոչ բոլորի հետ: Այսպիսով դրանց հիմնական պատասխանատվությունը կրում են խորհրդակցության կազմակերպիչները:

ամբողջական և փոխլրացված պատկերը վերականգնող համակարգի բացակայության պայմաններում: Քանի որ տարբեր միջազգային խաղացողներ տարբեր նպատակներ ունեն տարածաշրջանում, նրանց կողմից տրամադրվող օգնությունը հեռացրել է իրարից տարածաշրջանի երկրները՝ դարձյալ «բաշխելով» դրանք զարգացման տարբեր մոդելներով: Արդյունքում ինչպես Հայաստանը, այնպես էլ հարևան երկրները այսօր հայտնվել եմ կարևորագույն խնդրի առջև. սահմանել և կառուցել իրենց տարածաշրջանը:

Ո՞րն է վերջիվերջո Հայաստանն ընդգրկող տարածաշրջանը: Նախկին Խորհրդային Միությո՞ւնը: Կովկա՞սը: Հարավայի՞ն Կովկասը: Ընդլայնված Սևծովյան տարածաշրջա՞նը: Եվրոպական հարևանությո՞ւնը: ԱՊ՞Հ–ն: Մեծ Մերձավոր Արևե՞լքը: Ո՞ր աշխարհագրական և աշխարհաքաղաքական խաղացողներն են կարող հանդես գալ տարածաշրջանի համար օրինական և ընդունելի դերում և որո՞նք են թույլատրելի խաղացողները: Կարելի՞ է որպես այդպիսին դիտարկել Իրանը: Ո՞ւմ տեսանկյունից: Որտե՞ղ է վերջանում Ռուսաստանի՝ որպես գործող միավորի և խաղացողի դերը:

Հաշվի առնելով նշված բարդույթները՝ միջազգային հանրությանը և միջազգային կազմակերպություններին (ինչպես, օրինակ, ՄԱԿ–ի, ԵՄ–ն, այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններին և երկկողմ դոնորներին, մասնավորապես ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և այլ պետությունների կառավարություններին) առաջարկվում է հրաժարվել «մասնաբաժան»՝ առանձին պետություններին ուղղված մոտեցումից և անցնել տարածաշրջանային ծրագրավորմանը և միասնական տարածաշրջանային ռազմավարության իրականացմանը:

Սակայն դա պետք է արվի չանտեսելով և չզոհաբերելով տարածաշրջանի յուրաքանչյուր առանձին միավորի առանձնահատկությունները:

Ավելին՝ տարածաշրջանային մոտեցումը թույլ կտա Հայաստանին միջազգային հանրության աջակցությամբ մոտեցնել իր որոշ կարևոր խնդիրների, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծումը:

Նման մոտեցումը թույլ կտա նաև ստեղծել իրավիճակի ավելի ամբողջական պատկերը, բացահայտելով Հայաստանի և այլ տարածաշրջանային խաղացողների առջև կանգնած խնդիրների միջև եղած խորքային կապերը, մասնավորապես՝ ռուս–վրացական և հայ–վրացական հարաբերություններին, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի խնդրին, հայ–թուրքական հարաբերություններին, Թուրքիայում քրդերի խնդրին, ԱՄՆ և Իրանի ու ԱՄՆ և Ռուսաստանի հարաբերություններին վերաբերող ոլորտներում, ընդ որում դիտարկել այդ բոլոր խնդիրները Հայաստանում դրանց բախման կամ խաչման տեսանկյունից:

Այսպիսով, խորհրդակցությունը կոչ է անում միջազգային հանրությանը շեշտը տեղափոխել պետական շինարարությունից տարածաշրջանային շինարարության վրա:

Միջազգային հանրությանը առաջարկվում է նաև չկենտրոնանալ մեկ երկրի վրա ի վնաս մեկ այլ երկրի. Ժամանակն է հաղթահարել նեղ մոտեցումը և գիտակցել, որ այսօրվա աշխարհում պետությունները չեն կարող զարգանալ, եթե մեկուսացված են իրարից:

Վերը նշվածից հետևում է, որ անհրաժեշտ է փոխել միջազգային կառույցների ոչ միայն կազմակերպումը, այլև աշխատանքի մեթոդները (օրինակ, տեղերում անձնակազմի հանդիպումներ և փոխգործակցություն): այս առումով չափազանց կարևոր նշանակություն է ստանում «երկրագետ–մասնագետների» նախապատրաստումը: Նեղ մասնագետները պետք է փոխարինվեն լայնախոհ, խորը և բազմազան գիտելիք ունեցող «տարածաշրջանային մասնագետներով», որոնք ի վիճակի կլինեն առանձին երկրների ռազմավարությունները մշակելուց անցնել տարածաշրջանային ռազմավարական ծրագրավորման:

Խորհրդակցությունը ձևակերպեց նաև մի շարք առաջարկներ, որոնք հավասարաչափ կարևոր են ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային կազմակերպությունների համար: Տարածաշրջանում անհրաժեշտ է ապահովել հիմնական խաղացողների առավելագույն ցանցային ներգրավվածությունը: Քանի որ «ճանաչված–չճանաչված լինելը», որպես

միջազգային նորմ աստիճանաբար կորցնում է իր կշիռը, անարխիայի հավանականությունը մեծանում է, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է հարաբերությունների որոշակի մակարդակ հաստատել տարածաշրջանի չճանաչված կամ մասամբ ճանաչված միավորների՝ Աբխազիայի, Հարավային Օսետիայի և Լեռնային Ղարաբաղի հետ՝ իշխանության բացը լրացնելու և միակողմանի միությունների ստեղծումը կանխարգելելու համար:

Տարածաշրջանային շինարարության անհրաժեշտությունից բխում է մեկ այլ պահանջ. ստեղծել և զարգացնել գլոբալ և տարածաշրջանային միտումներն ուսումնասիրող և ընդհանուր տեսլականը մշակող կենտրոններ: Գիտական և հետազոտական կառույցները չպետք է սահմանափակվեն նեղ մասնագիտական թեմաների ուսումնասիրությամբ: Անհրաժեշտ է խրախուսել այնպիսի կառույցների ստեղծումը, որոնք նեղ ազգային շահերի մակարդակից կբարձրանան տարածաշրջանային և միջազգային մակարդակների վրա:

Ինչ վերաբերում է Հայաստանի ներքին, մասնավորապես՝ քաղաքացիական ոլորտը ընդգրկող խնդիրներին, ապա բնակչության օտարումը իշխանությունից առաջ է քաշում ակտիվ աշխատանքի անհրաժեշտությունը ոչ այնքան կառավարության, որքան հասարակության հետ, մանավանդ հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի քաղաքացիներին հաճախ փորձում են պահել դիտողի, այլ ոչ թե գործողի դիրքում:

Այս առաջարկները ուղղված են այն միջազգային կառույցներին, որոնք վերջին տարիների ընթացքում, ելնելով պետականության ամրապնդման ռազմավարական որոշումից, կառավարությանը ավելի մեծ աջակցություն էին ցուցաբերում, քան հասարակությանը: Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ քաղաքացիական հասարակության անկախ՝ պետության հովանավորությունը չստացող հատվածը թուլացավ և գրեթե կորցրեց պետական ինստիտուտների վրա ազդելու և դրանք վերահսկելու հնարավորությունը: Իրավիճակը էլ ավելի է վատթարացնում այն հանգամանքը, որ կառավարության միջոցով իրականացվող ծրագրերում միջազգային հանրությունը կառավարության հետ

աշխատանքը երբեմն փոխարինում է նրա առանձին ներկայացուցիչների հետ աշխատանքով: Անհրաժեշտ է աշխատել պետական կառավարման համակարգի, այլ ոչ թե նրա առանձին ժամանակավոր ներկայացուցիչների հետ:

Թեև Ռուսաստանը, Վրաստանը, Թուրքիան, Ադրբեջանը, Իրանը և Հայաստանը շատ են տարբերվում իրարից, բոլոր այդ երկրներում առկա է բնակչության տարբեր աստիճանի օտարումը իշխանությունից, ինչի արդյունքում բնակչությունը ընտրում է «միացումը» այլ կրագի գլոբալ և լոկալ ցանցերին՝ այդպիսով հարցականի տալ դնելով սեփական կառավարման կառույցների նպատակահարմարությունը: Սա իր հերթին նշանակում է, որ տարածաշրջանի բոլոր միավորներում հասունացել է այդ երկրների բնակչության տեսակետից համարժեք կառավարման համակարգի ստեղծման անհրաժեշտությունը:

Ազգայնական արժեքներին պետք է հակադրվեն քաղաքացիական (գլոբալ քաղաքացու) արժեքները: Դա թույլ կտա լրացնել գաղափարական վակուումը և դուրս կհանի հասարակությունները իրենց ապագայի նկատմամբ անտարբեր և օտարված վիճակից:

Եվրոպային հասցեագրված առաջարկներ

Եվրոպան կարող է ծառայել որպես փոխադարձ օտարացման և պառակտման այլընտրանքի փայլուն օրինակ: Եվրոպայի դերը ոչ թե տարածաշրջանի երկրներին՝ Եվրամիությանը միանալու սին հույսեր ներշնչելու, այլ իր արժեքները տարածելու մեջ է, և այդ արժեքներից մեկը միասնական տարածաշրջանի առավելության գիտակցումն է:

- Խորհրդակցության ընթացքում ընդծվեց Եվրոպայի ընդլայնման գաղափարին նոր մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Եվրոպայի ընդլայնման գաղափարին համադրվեց/հակադրվեց Կովկասի ընդլայնման գաղափարը. Ժամանակն է գիտակցել, որ տարածաշրջանների սահմանները փոխվում են և անհրաժեշտ է ստեղծել նոր արժեքային համակարգեր կոնֆերանսների, հետազոտությունների, հրատարակումների և պարզապես անձնական շփումների միջոցով: «Եվրոպականության» արժեքը՝ որպես կողմնորոշման

ընտրության տարբերակ, կարող է այլընտրանք դառնալ տարածաշրջանի որոշ երկրների համար, որոնք, ի տարբերություն Թուրքիայի կամ Վրաստանի, Եվրամիության կազմում ընդգրկվելու հույսեր չեն փայփայում:

- Եվրոպան մեծ գումարներ է հատկացնում տարածաշրջանին և մասնավորապես՝ հետկոնֆլիկտային Վրաստանին, և այս առումով չափազանց կարևոր է այդ գումարները բաշխել այնպես, որ դրանցից օգուտ քաղի ամբողջ տարածաշրջանը: Այլ կերպ ասած, տարածաշրջանում չպետք է մնան «մոռացված» հատվածներ, ինչպիսին էլ լինի վերջիններիս քաղաքական կարգավիճակը: Այսպես, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի, Հյուսիսային Կովկասի, Լեռնային Ղարաբաղի և Արևելյան Անատոլիայի համար եվրոպական արժեքները և զարգացման ճանապարհը նույնպես պետք է հասանելի լինեն:

2. Հայաստանին հասցեագրված առաջարկներ

«Ներքին» հարցեր

- Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ ինչպես ամբողջ տարածաշրջանում, այնպես էլ Հայաստանում արդար շուկա գոյություն չունի: Արդարությունը ամրապնդում և հզորացնում է շուկան: Մինչդեռ հայաստանյան շուկան շարունակում է թույլ և թերի մնալ: Հայաստանում շուկան ընդունում է միայն ներկրման վրա հիմնված բիզնեսը, իսկ արտահանումը գրեթե չի զարգանում, ինչը ի թիվս այլ պատճառների, պայմանավորված է

նաև ինստիտուցիոնալ համակարգով և օրենսդրությամբ: Սա նշանակում է, որ իրական կենսունակ շուկա Հայաստանը չունի: Ավելին՝ դրա զարգացումը կարծես թե չի էլ նախատեսվում: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանը շարունակաբար գործելու է որպես տրանսակցիաներ իրականացնելու համար նախատեսված մի տարածք, այդպես էլ չդառնալով շուկայական արտադրանք ստեղծող երկիր: Այս իրավիճակը անհրաժեշտ է կտրուկ փոխել:

- Խորհրդակցությունը շեշտեց նաև երիտասարդ լիդերների հմտությունները, մտավոր ներուժը և որոշում կայացնելու կարողությունները զարգացնելու անհրաժեշտությունը: Նշվեց, որ որոշումներ կայացնելու գիտությունը Հայաստանում չի ուսումնասիրվում և ուսուցման առարկա չի հանդիսանում: Լիդերության ուսուցումը փոխարինված է PR–ի դասընթացներով և/կամ ընտրական գործընթացները «գլուխ բերելու» հմտությունների յուրացմամբ:
- Հայաստանը գտնվում է բարձր ներքաղաքական լարման տակ, իսկ դա պահանջում է, որպեսզի ընդդիմությունը իր ուշադրությունը և ուժերը կենտրոնացնի քաղաքական լուծումներ պահանջող լայնածավալ խնդիրների վրա: Դրան կարելի է նպաստել «ստվերային կաբինետների» ստեղծման միջոցով, որոնք կստանձնեն քաղաքական հիմնախնդիրների լուծումները:
- Յուրաքանչյուր հարցով նորանոր ֆորմալ օրենքները ընդունելու փոխարեն (որոնք հաճախ կիրառվում են կամայական և ոչ թափանցիկ եղանակով) անհրաժեշտ է ապահովել անկողմնակալ և արդար գործունեություն՝ ոչ ֆորմալ օրենքների վրա հենվելով: Պետք է շարունակել աշխատանքը դե ֆակտո գոյություն ունեցող ուժեղ կառույցների հետ (որոնց թվին են պատկանում նաև «չգրված օրենքները»): Նման մոտեցում կարելի է կիրառել նաև Լեռնային Ղարաբաղում, քանի որ այնքան ժամանակ, որքան հակամարտությունը չի ստացել իր հանգուցալուծումը, այստեղ անհրաժեշտ է խթանել ժողովրդավարության բոլոր դրսևորումները, որոնք կարող են բարձրացնել այս շրջանի կառավարելիությունը:

- Անհրաժեշտ է, որպեսզի տեղեկատվական հոսքը հասնի պետական ծառայողներին (սովորաբար դա տեղի չի ունենում)։ Այդ հոսքը պետք է վեր բարձրանա գործունեության նեղ մասնագիտական ոլորտներից և «փորձագիտական» գնահատականներից, անցնի ցանցերով և կամուրջներ գցի կենտրոնի և ծայրամասերի միջև, այդպիսով քայլ առ քայլ ապացուցելով կենտրոն–ծայրամաս բաժանման անտեղիությունը։
- Որպես «կենտրոն–ծայրամաս» հարաբերությունների օրինակ կարող է ծառայել հայտնի փոխաբերությունը. ծիրանը հայկական գյուղին Երևանին համազոր կարևորություն է տալիս, և հաղորդակցման ազատ հոսքը թույլ է տալիս վերացնել այդ տարբերությունը։
- Իշխանության «սերվերները» պետք է իրենց տեղը զիջեն ծառայության «սերվերներին», քանի որ իշխանության հիերարխիկ համակարգում չափից դուրս կախյալ վիճակում գտնվող կառույցները դառնում են անկայուն և փխրուն։

«Արտաքին» հարցեր

- Որևէ երաշխիք, որ նոր ռուս–թուրքական պայմանավորվածությունների վրա կարելի է հույս դնել, Հայաստանը չունի։ Հասարակության օտարումը կառավարման գործընթացից թույլ չի տալիս ստեղծել արդյունավետ զարգացումն ապահովելու և հնարավոր անցանկալի հետևանքներից պաշտպանվելու համար անհրաժեշտ այպիսի մի համակարգ, որը կարող էր զսպող և հակակշռող գործոն դառնալ։ Եվ հենց այստեղ է որ էական դեր են խաղում «հակաֆիլտրերը», որոնցից անհրաժեշտ է ձերբազատվել։

«Հակաֆիլտր» հասկացությունը խորհրդակցության մասնակիցների կողմից կիրառվեց սահմանելու համար այն համակարգերը, որոնք օգտագործվում են ցանկացած դրական շարժ կամ ցանկացած համակարգային բարեփոխում արգելափակելու համար, եթե դրանք հակասում են մարդկանց փոքր խմբի կամ առանձին խաղացողների շահերին։ Օրինակ, այն հանգամանքը, որ հայերն ու թուրքերը անձնական մակարդակում բավականին ակտիվ առևտրային հարաբերություններ են հաստատել, որևէ կերպ չի ազդում դիվանագիտական

հարաբերություններ հաստատելու վերաբերյալ որոշումներ կայացնող քաղաքական գործիչների վրա: Այս շարքին է պատկանում նաև կոռուպցիայի դեմ պայքարի պատրվակով Էրգնեթի և Սադախլոյի տարածաշրջանային շուկաների վերացումը, ինչի արդյունքում կտրուկ թուլացավ այնպիսի կարևոր գործոնի դերը, ինչպիսին է հակամարտություններով բաժանված հասարակ մարդկանց շփումը: Այս և նմանատիպ այլ քայլերը ցույց են տալիս, թե ինչպես են ստեղծվում և կիրառվում «հակաֆիլտրերը», որոնք մեծ վնաս են հասցնում տարածաշրջանի հասարակություններին և մասնավորապես՝ հայ հասարակությանը:

Որպես «հակաֆիլտրերի» օրինակ կարելի է բերել նաև քաղաքացիական ազդեցության բացակայությունը Հայաստանի արտաքին քաղաքականության վրա (անկախ վերջինիս հաջողություններից կամ տապալումներից). Հայաստանում արտաքին քաղաքականությունը այն ոլորտն է, որը հուզում է երկրի յուրաքանչյուր քաղաքացուն, ուստի այստեղ որոշումները չպետք է կայացվեն մի խումբ մարդկանց կողմից, ինչպիսիք էլ լինեն վերջիններիս անձնական որակները:

«Հակաֆիլտրերի» այլ օրինակներ. գործող օրենքները արդյունավետ ձևով կիրառելու փոխարեն ընդունվում են դրանց հաջորդ տարբերակները, որոնք իրականում էլ ավելի են վատթարացնում իրավիճակը, քանի որ սահմանափակում են քաղաքացիների՝ իրենց իրավունքները իրականացնելու ազատությունը: Կամ. բարեփոխումներ կատարելու համաձայնություն է տրվում (ասենք, կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով), որը, սակայն վերածվում է ծայր աստիճանի բյուրոկրատացված և գրեթե անարդյունք մի գործընթացի:

- Աշխարհը գնում է դեպի հետևյալ գաղափարի ընդունումը. քանի որ ավելի լավ է կիրառել «փափուկ ուժ» քան բռնություն, «փափուկ պետություն» դառնալու համար անհրաժեշտ է «ցանցայնացումը»: Բիրտ ուժով ձեռք բերած հաղթանակը կարող է միայն

կարճատև լինել, իսկ երկարաժամկետ հեռանկարում այն անպայման տանուլ կտրվի, քանի որ կայուն զարգացումը կարող են ապահովել միայն փոխշահավետ լուծումները:

- Այս «տանուլ չտալը» հաճախ սոսկ մեկնաբանության հարց է, մանավանդ հայերի համար: Հիշենք հայտնի ֆուտբոլային անեկդոտը. հայը համարվում է լավ դարպասապահ, քանի որ անգամ եթե նա գնդակ է բաց թողնում, ոչ ոք չի կարողանում համոզել նրան, որ դա իսկապես տեղի է ունեցել: Սակայն նույնիսկ հաշվի առնելով այս հանգամանքը, փոխադարձաբար «տանուլ չտալու» ձևաչափի ստեղծումը կարող է դրական ազդակ դառնալ, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ներկայումս բոլոր ջանքերը գործադրվում են ճիշտ հակառակ՝ թշնամու կերպարի և մշտական սպառնալիքի արմատավորման ուղղությամբ:

Այսպիսի մոտեցումը կործանարար ազդեցություն է գործում հասարակության վրա, քանի որ նման վիճակում հայտնված հասարակությունը կորցնում է ոտքի տակի հողը և սեփական ուժերի վրա ապավինելու ունակությունը:

Եթե հարևանների հետ քաղաքակիրթ և կայուն հարաբերություններ հաստատելու համար Ադրբեջանի վրա պետք է փափուկ ազդեցություն գործադրել, ապա նույն մոտեցումը անհրաժեշտ է կիրառել տարածաշրջանի այլ խաղացողների նկատմամբ:

Առաջարկներ սփյուռքի հետ աշխատելու վերաբերյալ

- Հայաստանի ներքաղաքական կյանքում մասնակցելու՝ սփյուռքի իրավունքին վերաբերող հարցը նոր ռազմավարական մոտեցումներ է պահանջում: Ինչպես գիտենք, այսօր Հայաստանի այն քաղաքացիները, որոնք երկրի սահմաններից դուրս են բնակվում, զրկված են նախագահ ընտրելու իրավունքից: Միևնույն ժամանակ սփյուռքի ականավոր և ազդեցիկ գործիչները ցանկության դեպքում կարող են ազդել ընտրական գործընթացի վրա:

- Հասարակությունը պետք է լիովին տեղեկացված լինի սփյուռքի կողմից կատարվող ներդրումների մասին (ինչպես գործարար, այնպես էլ բարեգործական ոլորտներում) և

հնարավորություն ունենա հետևելու, թե ինչ ճանապարհ են դրանք անցնում: Հայաստանում սփյուռքի ներկայացուցիչների համար գործող ներդրման ընթացակարգը իրավական առումով չպետք է լինի ավելի փափուկ, քան տեղացիների համար գործող համապատասխան ընթացակարգը:

- Անհրաժեշտ է խրախուսել սփյուռքի ներկայացուցիչներին և կենտրոնացնել նրանց ուշադրությունը երկարաժամկետ ներդրումային գաղափարների վրա, որոնք թույլ կտան զարգացնել ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները: Ընդ որում կոռուպցիայից խուսափելու և սփյուռքի նեդրումների արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ վերահսկման ընթացակարգերը և մեթոդները մշակելիս պետք է օգտվել բազմակողմ դոնորների փորձից:

Ոչ կառավարական կազմակերպություններին, տեղական հիմնադրամներին և այլ ֆինանսավորող կազմակերպություններին հասցեագրված առաջարկներ

- Կոնկրետ արդյունքներ ստանալուն ուղղված փնտրտուքներում ոչ կառավարական կազմակերպություններն ու դոնորները աչքաթող են արել ազդեցության մի շարք չափազանց կարևոր ոլորտներ, որոնք մասնավորապես կապված են այնպիսի կենսական խնդրի հետ, ինչպիսին է երիտասարդ սերնդի մտավոր կարողությունների և ռազմավարական ծրագրեր մշակելու ու որոշումներ կայացնելու ունակությունների զարգացումը: Այս առաջարկը խորհրդակցության մասնակիցները սահմանեցին որպես «ուղեղները թափ տալու պահանջ»:

- Հայաստանում և տարածաշրջանում գործող հասարակական նախաձեռնողները պետք է մտածեն այն մասին, որ անհրաժեշտ է ազդել ոչ միայն պաշտոնական քաղաքականության (քաղաքացիական հասարակության տարբեր, օրինակ՝ կատարելագործված օրենքների ընդունմանն ուղղված արշավների միջոցով), այլև խաղի ոչ ֆորմալ կանոնների և ինստիտուցիոնալ կառույցների վրա: Նրանք չպետք է հրաժարվեն

«փափուկ» արդյունքներ տվող ծրագրերից, որոնց արդյունավետությունը կարելի է գնահատել միայն երկարաժամկետ հեռանկարում: Նրանց հատուկ ուշադրությանը պետք է արժանանան տարածաշրջանային նախաձեռնություններն ու քաղաքացիական դիվանագիտությունը:

- Հայաստանում անցկացվող բարեփոխումների հիմքում ընկած ռազմավարությունը, ինչպես նաև ապագայի այն տեսլականը, որին նպատակաուղղված են այդ բարեփոխումները, հաճախ հասկանալի չեն ոչ դրանք իրականացնողների, ոչ էլ լայն հասարակության համար: Ինչի՞ն է ձգտում Հայաստանը: Որո՞նք են երկրի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակները: Նման իրավիճակում, երբ բացակայում է ընդհանուր պատկերը, որևէ առանձին կազմակերպություն կամ կառույց չի կարող արդյունավետ ձևով մշակել և իրականացնել իր ռազմավարությունը: Հետևությունը մեկն է. անհրաժեշտ է ծավալել հատուկ միջոցառումներ և հատուկ գործունեություն, որոնք կնպաստեն ապագայի տեսլականը ստեղծելուն:

- ԽՍՀՄ փլուզման արդյունքում Հայաստանը ստիպված եղավ վերապրել խորհրդային արժեքային համակարգի քայքայումը իր կրկնակի ստանդարտներով: Նաև պարզ դարձավ, որ ժամանակակից ինդուստրիալ և հետինդուստրիալ իրականության պայմաններում հնարավոր չէ օգտվել ազգայնականության վրա հիմնված արժեքային համակարգից: Այսօր մենք ապրում ենք պոստմոդեռն դարաշրջանի արդյունքում առաջացած և դեռ շարունակվող գլոբալ արժեքային ճգնաժամի պայմաններում: Վերջապես, Հայաստանը պետք է նաև հաշվի առնի արժեքային համակարգերի հարաբերականությունը. մի խնդիր, որը սովորաբար ստիպված են լուծել «խաչմերուկային» և դիասպորալ ազգերը: Ներկայումս առաջարկվող արժեքային համակարգերից և ոչ մեկը չի կարող լիովին բավարարել հայ հասարակության պահանջները. ոչ հետխորհրդային հայկական տարբերակը, ոչ ազգայնական տարբերակը, ոչ հետխորհրդային ռուսականը, ոչ պարզեցված «արևմտյանը» (ժողովրդավարություն և մարդու իրավունքներ) կամ եվրոպականը, որը, սակայն, ավելի շատ երանգներ ունի: Թերևս միայն վերջինն է, որ

հստակ արձագանք է գտնում հայության որոշ հատվածի սրտերում, սակայն անգամ այս տարբերակը լիովին ընդունվելու և յուրացվելու համար պետք է որոշ փոփոխությունների ենթարկվի:

- Ի լրումն գոյություն ունեցող արժեքային համակարգերի փոփոխմանն ու հարմարեցմանը անհրաժեշտ է ծավալել նոր արժեքային համակարգի մշակմանն ուղղված գործունեություն. պետք է ուսումնասիրել, թե ինչպես են առաջանում արժեքները, ինչպես են դրանք ձևավորվում և ընդունվում հասարակությունների կողմից:

Մի քանի հատուկ առաջարկներ

- Քաղաքագիտությունը պետք է պոկվի ավանդական աշխարհաքաղաքական հաշվարկներից և ուղղվի դեպի «ցանցաքաղաքական» մոդելավորումը, ըստ որի պետությունները պետք է ցանցայնանան, որպեսզի կարողանան գոյատևել:
- Անհրաժեշտ է կազմակերպել պարբերական խորհրդակցություններ Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Նման խորհրդակցությունները պետք է ունենան հստակ կառուցվածք և հիմնվեն արդյունավետ մեթոդաբանության վրա, որի շնորհիվ հնարավոր կլինի ընդհանուր եզրեր գտնել տարբեր սոցիալական շերտերի, ինչպես նաև կառավարության և հասարակության մոտեցումների միջև: Անհրաժեշտ է նաև պարբերաբար կազմակերպել փորձագետների՝ տվյալ խորհրդակցության տիպի հանդիպումներ: Միևնույն ժամանակ պետք է մշակել նման հանդիպումների արդյունքների կիրառման մեխանիզմները:

- Ինտերնետային էջը, որտեղ կհավաքվեր և որտեղից կտարածվեր քաղաքագիտության և պետական քաղաքականության ավանդական շրջանակներից դուրս գալու ընդունակ «ունիվերսալիստների» (այլ ոչ թե նեղ մասնագետների և փորձագետների) մտավոր արտադրանքը, նույնպես կնպաստեր լայն հասարակական երկխոսության ծավալմանը, որը, միջազգային երկխոսության հետ մեկտեղ հատուկ ֆիլտրերի և գործարկման համակարգերի կիրառմամբ կստեղծեր գաղափարների «մուտքը» և «ելքը» ապահովող բարենպաստ դաշտ, ընդ որում ինչպես տարածաշրջանի ներսում, այնպես էլ դրանից դուրս:
- Փակ քաղաքական և տնտեսական համակարգը պահպանելու նպատակով կիրառվող «հակաֆիլտրերը» հաղթահարելու համար անհրաժեշտ է ստեղծել նոր միջոցներ, որոնց մշակումը ուղղակիորեն կապված է կրթական համակարգի բարեփոխումների հետ: Այդ բարեփոխումները խիստ անհրաժեշտ են՝ Հայաստանի պահանջները համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար:
- Հայաստանը պետք է ակտիվորեն առաջ մղի ապագա լիդերներին դաստիարակելու և կրթելու գործընթացը: Խորհրդակցության ընթացքում ուրվագծվեց նման լիդերի կերպարը (սիմվոլիկ «Միստեր Իքսը»). Դա գործարարի և հասարակական նախաձեռնողի հատկություններով օժտված մի մարդ է, որը իր գործունեությամբ բարենպաստ ազդեցություն է գործում հասարակության վրա: Բերվեց նաև Ջորջ Սորոսի օրինակը, որը իր գործունեության սկզբնական շրջանում պատճենման սարքեր նվիրելով Խորհրդային Միության բոլոր ակադեմիական ինստիտուտներին, ապահովեց տեղեկատվության ազատ հոսքը, ընդհատակից դուրս բերեց արգելված *սամիզդատը* և ի վերջո մեծապես նպաստեց *պերեստրոյկայի* տարիներին խորհրդային համակարգում տեղ գտած բարեփոխումներին:
- Հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում Ռուսաստանի միջամտության արդյունքում իրավիճակը տարածաշրջանում ավելի անկայուն դարձավ: Երբ (եթե) ռուսական երկաթուղին կապի Հայաստանը Թուրքիայի հետ, չվտանգելով Լեռնային Ղարաբաղի շահերը, դա դեռ կարելի կլինի գնահատել որպես դրական գործոն:

Սակայն եթե իրավիճակը Ղարաբաղում դառնա անկայուն, իրադարձությունների նման զարգացումը կարող է լուրջ խնդիր առաջացնել: Ինչևիցե, անհրաժեշտ է ձեռնարկել լայնածավալ հասարակական քննարկումներ այն մասին, թե ինչ քայլերի պետք է դիմի Հայաստանը կայունությունը ամրապնդելու համար, միևնույն ժամանակ շարունակելով կառուցողական հարաբերություններ պահպանել «կոմպլեմենտար ճակատի» ամբողջ գծով:

- Անհրաժեշտ է նաև ստեղծել մշտապես գործող աշխատանքային խումբ, որը կզբաղվի արտաքին քաղաքականության հարցերով և որի կազմում կընդգրկվեն ինչպես համապատասխան կառավարական գերատեսչությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ընդ որում այդ խմբի աշխատանքը պետք է հիմնված լինի գաղտնիության և թափանցիկության՝ հստակորեն մշակված հարաբերակցության վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎՐԱ



Դավիթ Հովհաննիսյան

Հարգելի գործընկերներ, քանի որ այստեղ փորձագետներ են հավաքված, ես չեմ խորանա բոլորին հայտնի մանրամասների մեջ: Վիեննայի կոնգրեսից հետո ձևավորված աշխարհակարգի մասին բոլորդ շատ լավ գիտեք: Աշխարհակարգ ասելով մենք իհարկե նկատի ունենք դեռևս այն փոքր աշխարհը, որը գիտակցվում էր որպես այդպիսին՝ Եվրոպան: 306 գերմանական պետություններ կոնգրեսի ժամանակ վերակազմակերպվեցին, դարձան 32 պետություն, և սա Եվրոպայի միջնամասի այն ամրապնդումն էր, որը թույլ տվեց հաստատել համաեվրոպական խաղաղություն համարյա 100 տարով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատվեց մեկ այլ անվտանգության համակարգ. Վարշավայի պայմանագիրը և ՆԱՏՕ–ն: Բայց բացի ՆԱՏՕ–ից կան մի շարք այլ՝ առաջին անգամ ձևավորված ռեգիոնալ անվտանգության համակարգեր, որոնք, սակայն, կապված են հիմնականի՝ ՆԱՏՕ–ի հետ:

Ինչո՞ւ են այս անվտանգության համակարգերի, մոդելների մասին դատողությունները կարևոր: Բնականաբար, Էրդողանի առաջարկած ռեգիոնալ անվտանգության համակարգի կապակցությամբ:

Ի՞նչ մենք ունեինք Խորհրդային Միության փլուզումից հետո: Վարշավայի պակտի քայքայում և ՆԱՏՕ–ի՝ իր գոյությունը իմաստավորելու շարունակական փորձերը : Դավիթ Պետրոսյանը հիշեցրեց Ֆրենսիս Ֆուկույամայի տեսության մասին, այն է.

ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, ազատականությունը հաղթել են ամբողջ աշխարհում, սահմանները պետք է դառնան անցանելի, ապրանքները, ֆինանսները, ինֆորմացիան և մարդիկ պետք է անխոչընդոտ տեղաշարժվեն: Այս էյֆորիկ վիճակը արագ անցավ:

Ինչ վերաբերում է մեր տարածաշրջանին, ապա այստեղ քննարկվել են մի շարք մոդելներ: Առաջինը Կովկասյան քառյակն է, որը Ռուսաստանը առաջ քաշեց դեռ 1994 թվականին: Կովկասյան քառյակը նշանակում էր Ռուսաստան գումարած երեք կովկասյան պետություններ, հաշվի չառնելով չճանաչված սուբյեկտները: Երկրորդ մոդելը սկսեց քննարկվել 1997 թ. Դա 3 + 3 + 2 մոդելն էր. երեք սուբտարածաշրջանային պետություններ՝ Սդրբեջան, Հայաստան, Վրաստան, երեք մեծ տարածաշրջանի խաղացողներ՝ Թուրքիա, Իրան, Ռուսաստան և երկու գլոբալ խաղացողներ՝ ԱՄՆ և Եվրամիություն:

Եվ վերջապես այն, ինչը հիմա է առաջարկվում ՝ Թուրքիա, Ռուսաստան և 3 կովկասյան պետություններ: Սրանցից ոչ մեկը հաշվի չեն առնում մի կարևոր փաստ. գոյություն ունի գլոբալ անվտանգության համակարգը՝ ՆԱՏՕ–ն: Ավելի ճիշտ, այս փաստը հաշվի առնվում էր, բայց ոչ քննարկվում ոչ էլ վերլուծվում էր: Նույնը կարելի է ասել մեկ այլ մեգատարածաշրջանային համակարգի՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մասին:

Հիմա առաջարկվում է անվտանգության նոր համակարգ: Իրականացվո՞ղ բան է սա, թե ոչ: Իմ սուբյեկտիվ փորձագիտական կարծիքն այն է, որ ոչ: Այստեղ, այս փոքր ենթատարածաշրջանում ՆԱՏՕ–ի և ՀԱՊԿ–ի բախման կիզակետն է: Առաջին պատճառն այն է, որ այստեղ միմյանց հակասող, միմյանց դեմ աշխատող և գործող երկու համակարգերի հատման կետն է: Հնարավո՞ր է արդյոք նման պայմաններում ստեղծել այնպիսի մի ձևաչափ, որը կապահովի երկու անվտանգության համակարգերի շահերի և միտումների ներդաշնակ դրսևորումը: Իմ տեսակետից դա բացառված է:

Երկրորդ հիմնական պատճառը, թե ինչու սա չի կարող իրականանալ, կապված է Իրանի հետ:

Իսկ երրորդ պատճառն այն է, որ մեծ խաղացողների և տարածաշրջանային խաղացողների համար ռեսուրս հանդիսացող հակամարտությունները երկար ժամանակով դադարեցին ռեսուրս լինել այդ խաղացողների համար: Հարավային Օսեթիայի և Աբխազիայի վերաբերյալ արդեն դժվար է կիրառել հսկվող կոնֆլիկտ հասկացությունը, անշուշտ, եթե իրավիճակը շատ անկանխատեսելի ձևով չզարգանա, ինչը դեռևս չի երևում: Այս երկու ռեսուրսները սպառված են: Մնում է մի առկա ռեսուրս՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, իսկ դա նշանակում է, որ լարվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ անխուսափելիորեն աճելու է: մեկ այլ՝ լատենտ ռեսուրսը կապված է հայ–թուրքական հարաբերությունների հետ: Այս խնդիրը ակտիվորեն օգտագործվում է: Ասելով լատենտ, ես իհարկե որոշակի սխալ եմ թույլ տալիս, որովհետև իրականում այն արդեն լատենտ չէ: Բայց հնարավորությունները, որոնք կարող են օգտագործել բոլոր խաղացողները, ավելի լայն են, քան ներկայումս օգտագործվողները:

Վերջապես կա մի կարևոր խնդիր, որը տարածաշրջանի ներքին գործընթացների վրա ուղղակիորեն չի ազդում, սակայն մեծ ազդեցություն ունի այդ պրոցեսների պրոբլեմատիզացման վրա: Խոսքս Սև ծովում ամերիկյան ռազմանավերի առկայության մասին է: Միացյալ Նահանգների վերջին 14–15 տարիների երազած խնդիրը՝ երեք ծովերի համակարգը ամբողջականացնելու նպատակը այսօր իրականացավ:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՌՈՒՍ–ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Աղասի Ենոքյան

Ես, հավանաբար, մի փոքր կխոսեմ տեսությունից, իսկ հետո կփորձեմ այն կիրառել մեր տարածաշրջանի նկատմամբ: Տեսությունը ասում է հետևյալը. մենք ունեինք բազմաբևեռ աշխարհ, հետո ուհեցանք Առաջին համաշխարհային պատերազմ ու էլի բազմաբևեռ աշխարհ, հետո Երկրորդ համաշխարհային պատերազմ, որին հետևեց երկբևեռ աշխարհ, վերջապես սառը պատերազմի ավարտից հետո աշխարհը դարձավ միաբևեռ:

Այստեղ սովորաբար կանգնում են, սակայն ես ուզում եմ այդ միաբևեռ աշխարհի ժամանակագրությունը բաժանել երկու մասի. 1991 թ–ից մինչև 2001թ. և 2001–ից մինչև այսօր: Պարզ է, որ սահմանային կետը 2001թ. սեպտեմբերի 11–ն է, որից հետո աշխարհը փոխվեց: Ես ուզում եմ պնդել, որ փոփոխությունը տեղի ունեցավ երկու բնագավառում: Մինչև 2001թ. ամբողջ անվտանգության համակարգը կապվում էր Եվրոպայի հետ, և միայն այդ հայտնի օրվանից հետո սկսեցին մտածել համաշխարհային անվտանգության մասին: Սա բնական է: Գլոբալիզացիան չէր կարող սահմանափակվել միայն Եվրոպայով: Այսօր մենք տեսնում ենք, որ աշխարհի ամենաթեժ կետերը՝ Իրաքն ու Ավղանստանը Եվրոպայից դուրս են: Ուրեմն մինչև սեպտեմբերի

11–ը և դրանից հետո եղած աշխարհների կարևոր առանձնահատկությունն այն է, որ անվտանգության համակարգը իսկապես դարձավ գլոբալ:

Երկրորդ առանձնահատկության մասին քիչ առաջ նշվեց. Դա հայտարարված նոր աշխարհակարգն է, կամ գուցե Ֆուկույամայի «պատմության ավարտը», որը նույնպես ավարտվեց այդ օրը: Ինչո՞ւ ավարտվեց: Երբ Խորհրդային Միությունը փլուզվեց և երկու հակադիր բևեռների տասնամյակներ տևող թեժ պայքարը վերջացավ, հայտարարվեց համաշխարհային դեմոկրատիայի շրջանը: Ամեն ինչ քիչ թե շատ նորմալ ընթանում էր մինչև որ այդ երկու շենքերը պայթեցրեցին: Դրանից հետո բոլորը վերադարձան ռեալիզմին, ուժի դիրքից խոսելուն: Ու մենք եկանք հանգեցինք քաղաքագիտական, միգուցե նաև իմացաբանական կոնֆլիկտի:

Աշխարհը կառուցվել էր սովորական, այսինքն՝ պետություններից եկող սպառնալիքների հիման վրա, իսկ Ամերիկայի վրա հարձակումը «ավանդական» սսպառնալիք չէր: Պետություն չէր հարձակվել, հարձակվել էին ապապետական խմբեր: Աշխարհը դրան պատասխան տալու ձևը չգիտեր: Պատասխանը տրվեց դարձյալ պետությանը՝ Աֆղանստանին:

Ասածս այն է, որ եթե սառը պատերազմի շրջանը չափազանց մանրամասնորեն ինստիտուցիոնալիզված աշխարհ էր. գոյություն ունեին դրա համար անհրաժեշտ կազմակերպությունները, կառույցները, օրենքները, ապա հետսառըպատերազմյան աշխարհում պարզվեց, որ այդ կառույցները չէին աշխատում: Անցած 10 տարիների՝ 1991–2001 թթ. ընթացքում ոչ ոք չէր մտածել կառույցներ ստեղծելու մասին: Սահմանափակվել էին միայն ԵԱՀԿ

ֆունկցիաների փոփոխությամբ և ՆԱՏՕ–ի ու Եվրամիության շատ լիբերալ ընդլայնմամբ, ընդ որում այնքան էլ պարզ չէր, թե ինչ նպատակ ունի այդ ընդլայնումը:

Ի՞նչ է ստացվում: Եթե խոսում ենք ռեալիզմի համատեքստում (իսկ իմ համոզմամբ 2001 թ. հետո մենք վերադարձանք ռեալիզմին), ապա պետք է խոսենք ուժերի մասին: Այսօր կա մի ուժ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այս պետությունը գործում է զուտ ուժի դիրքերից, այսինքն գործում է այնտեղ, որտեղ շահ ունի: Գլոբալ պատասխանատվությունը նա իր ուսերից գցել է: Եթե ինչ–որ տեղ առաջանում է որևէ խնդիր կամ սպառնալիք, այդ սպառնալիքին պետք է պատասխանի այն պետությունը, որը համարձակություն է ունեցել հայտարարելու, որ ինքն է ամեն ինչի տերն ու տնօրենը: Հիմա սպառնալիքը կա, բոլորը նայում են Ամերիկային, սպասելով, որ նա ինչ–որ բան կանի, նա էլ ասում է. կուզեմ կանեմ, չեմ ուզի՝ չեմ անի:

Այսպիսիք են այսօրվա խաղի կանոնները: Մենք հիմա չունենք բալանս ստեղծելու մեխանիզմներ: Եվ հույսներս դնում ենք տարբեր տիպի ոչ պետական խաղացողների վրա: Վրացիների հույսը ՆԱՏՕ–ն է, թուրքերը առաջարկեցին Կովկասյան խաղաղության պլատֆորմը, ռուսները նորից վերհիշեցին Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը: Բնական արձագանք է. եթե պետական ակտորները չեն աշխատում, փորձենք ոչ պետականները: Եթե գլոբալ անվտանգության համակարգը չկա, եկեք գոնե փորձենք ռեգիոնալ անվտանգության համակարգեր ստեղծել: Այսպիսով ստեղծվել է յուրօրինակ մի իրավիճակ,

որը կարծես թե դեռ պատասխան չունի: Այն հարցին, թե ինչպես անել, որ պատերազմներ չլինեն, դեռ պատասխան տրված չի:

Սրան զուգահեռ տեղի է ունենում սուվերենության գաղափարի նվազումը: 17–րդ դարից սկսած սուվերենությունը մի բան էր նշանակում. եթե դու սուվերեն պետություն ես, ուրեմն անվտանգ ես: Վերջապես մենք ինչի՞ ենք ուզում, որ Ղարաբաղը անկախ պետություն լինի: Որովհետև եթե այն անկախ է, դրանով իսկ պաշտպանված է: Գոյություն ունի «սուվերենությունը հավասար է անվտանգությանը» բանաձևը: Հիմա պարզվեց, որ դա չի աշխատում: Լավ, Աֆղանստանի դեպքում դեռ հասկանալի է. այնտեղ ՄԱԿ–ի որոշում կար, ՆԱՏՕ–ի որոշում կար: Իսկ Իրաքի դեպքո՞ւմ: Ոչ մի միջազգային կազմակերպություն չվերցրեց իր վրա այդ պատասխանատվությունը, սակայն դա չխանդարեց մեծ ուժին գնալ ու ջարդել «սուվերենությունը հավասար է անվտանգությանը» բանաձևը: Եթե դա կարելի էր անել Իրաքի հետ, ապա հանգիստ կարելի էր անել նաև փոքրիկ Վրաստանի հետ:

Սրանք այն հիմնական գլոբալ տեսական հարցերն էին, որոնք ուզում էի ձեր ուշադրությանը ներկայացնել: Հիմա դառնանք մեր տարածաշրջանին: Ի՞նչ եղավ մեր տարածաշրջանի հետ:

- Ռուսաստանը հեռացավ տարածաշրջանից:
- Հնարավոր է Ռուսաստանի հետագա միջազգային մեկուսացումը. այնպես, ինչպես վարվում են Իրանի հետ :
- ՆԱՏՕ–ն ինտենսիվացրել է իր գործունեությունը տարածաշրջանում:

- Հետաքրքիր է, որ թեև անմիջական ռմբակոծության վտանգի տակ էր դրված Բաքու–Ջեյհանը, թեև պատերազմական մեծ քաղաքական ռիսկի մեջ էր հայտնվել կարևոր էներգետիկ արտահանողներից մեկը՝ Ռուսաստանը, նավթի գները ոչ թե աճեցին, այլ ընկան: Սա նշանակում է, որ նավթային գործոնի մեջ լուրջ կառավարելիություն կամ խաբեություն կա: Ինչևիցե նավթամուղերի և գազամուղերի միստիկ նշանակությունը որոշակի կերպով թուլացավ:
- Վրաստան–Ռուսաստան կապերի խզումից հետո Հայաստանում կոմունիկացիաների և ենթակառուցվածքների ոլորտում արված լայնածավալ ռուսական ներդրումները մնացին օդում կախված, որովհետև Ռուսաստանի հետ կապ չկա ոչ Վրաստանով, ոչ էլ Ադրբեջանով:
- Ռեգիոնի երեք հակամարտություններից երկուսը լուծվեցին: Վատ լուծվեցին. ոչ թե քաղաքական, այլ ռազմական ձևով, բայց լուծվեցին: Մնաց Ղարաբաղը:
- Ռուսաստանի համար, որը մեծ ներդրումներ ունի իր ֆորպոստում, չափազանց էական դարձավ չկտրվել վերջինից: Այս իմաստով Ռուսաստանի համար կարևորվում է Թուրքիայի դերը, որի միջոցով նա կարող է Հայաստան գալ:
- Թուրքիայի համար սա մի կողմից Ռուսաստանի ստեղծած հնարավորությունն ու իր բնական ձգտումն է դեպի ռեգիոն, մյուս կողմից՝ ԱՄՆ–ի մշտական ցանկությունն է, որ Թուրքիան ռեգիոնում

ակտիվ գործի: Ռուսաստանի համար կարևոր խնդիր պետք է լինի ոչ միայն Թուրքիայի հետ սահմանի բացումը, այլև Ջուլֆայի բացումը:

- Մոտեցում կա, որը, կարծում եմ, կյանքի իրավունք ունի: Դա այն է, որ ռուս–վրացական պատերազմը ավելի շատ Ուկրաինայի համար էր: Այս պատերազմի համատեքստում նորից որպես հոմանիշներ սկսեցին օգտագործվել Ուկրաինան և Վրաստանը: Բնականաբար, Ուկրաինայում տեղ գտան համապատասխան զարգացումները, և ՆԱՏՕ–ի համատեքստում դարձյալ խոսում են Ուկրաինայի և Վրաստանի մասին: Ես կարծում եմ, որ շատ շուտով կսկսեն խոսել միայն Ուկրաինայի մասին, Վրաստանի մասին էլ չեն խոսի: Վրացիները ամենավատ օրինակը ցույց տվեցին. ռուսական զորքերի գալուն պես փախան: Որևէ ճակատամարտ չտվեցին: Այսինքն նրանք հիմնականում ուզում էին, որ ՆԱՏՕ–ն գա իրենց պաշտպանի: ՆԱՏՕ–ն կոլեկտիվ անվտանգության պայմանագիր է: Այսինքն՝ միասին պետք է պաշտպանեն, եթե ինչ–որ տեղ խնդիր առաջանա: ՆԱՏՕ–ն տեսավ, որ Վրաստանը փախչող զորքեր ունի, չնայած այն միլիարդներին, որ դրել էին Վրաստանի բանակի կառուցման մեջ:
- Իհարկե հաջորդ գործոնը դա ամերիկյան ռազմածովային ուժերի մուտքն է դեպի Սև ծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Վահան Տեր–Ղևոնդյան

Տարածաշրջանային նոր զարգացումները աննախադեպ էին շատ առումներով: Դրանք լուրջ փոփոխություններ մտցրեցին Խարհրդային Միության փլուզումից և մանավանդ երեք զինադադարների հաստատումից հետո ձևավորված իրավիճակում, որ գրեթե անփոփոխ էր մնացել անցած մեկուկես տասնամյակի ընթացքում:

Վրացական դեպքերը նոր փուլ նշանավորեցին առաջին հերթին հայ–ռուսական, հայ–վրացական և հայ–թուրքական հարաբերություններում, բայց նաև որոշ ճշգրտումներ մտցրեցին Հայաստան–Եվրոպական Միություն, Հայաստան–ԱՄՆ կապերում:

Անշուշտ, առաջին մարտահրավերը հայկական դիվանագիտության համար օգոստոսի 8–ին սկսված վրացական անակընկալ հարձակումն էր Ցխինվալի վրա և դրան հաջորդած մի քանի օրերի ռազմական գործողությունները Ռուսաստանի և Վրաստանի միջև: Պաշտոնական Երևանը ստիպված էր միաժամանակ իր վերաբերմունքն արտահայտել հարևան և դեպի Հայաստան

տանող հիմնական հաղորդակցության ուղիներին տիրապետող Վրաստանի, ռազմավարական ամենասերտ գործընկեր հանդիսացող Ռուսաստանյան Դաշնության և ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա անկախության ձգտող Հարավային Օսեթիայի հանդեպ՝ չմոռանալով նաև Վրաստանում գտնվող ՀՀ քաղաքացիների մասին:

Առաջին արձագանքը ՀՀ Արտաքին գործերի նախարարության հայտարարությունն էր հրապարակված հենց օգոստոսի 8–ին, որտեղ մասնավորապես ասված էր. «Հայաստանը խիստ մտահոգված է Հարավային Օսեթիայում ստեղծված իրավիճակով և հույս է հայտնում, որ կողմերը ջանքեր կգործադրեն երկխոսության միջոցով վիճելի հարցերին շուտափույթ խաղաղ լուծում տալու համար, ինչը թույլ կտա վերականգնել կայունությունն ու խաղաղությունը մեր հարևան երկրում»:

Հաջորդ օրվա հաղորդակցության մեջ ասվում էր, որ Հայաստանի Արտգործնախարարությունը իր խորին ցավն է արտահայտում Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով բազմաթիվ մարդկային զոհերի կապակցությամբ: Պատերազմի առաջին օրերին պարբերաբար հաղորդվում էր ինչպես Վրաստանից Հայաստան տեղափոխված ՀՀ քաղաքացիների, այնպես էլ այն օտարերկրացիների մասին, որոնք Հայաստանի տարածքով վերադարձան իրենց երկրները: Ընդ որում իշխանությունների կողմից օտարերկրացիներին որոշակի աջակցություն ցուցաբերվեց /տրամադրվեցին մուտքի անվճար արտոնագրեր, ազատվեցին օդային ելքի տուրքից և այլն/:

Հակամարտող կողմերի հետ առաջին դեմքերի մակարդակով առաջին շփումը եղավ օգոստոսի 13–ին, երբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հեռախոսազրույց ունեցավ ՌԴ Նախագահի հետ: Նա իր և հայ ժողովրդի անունից ցավակցություն հայտնեց Դմիտրի Մեդվեդեվին վերջին օրերի ընթացքում Հարավային Օսեթիայում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների արդյունքում խաղաղ բնակչության, այդ թվում Ռուսաստանի քաղաքացիների և ռուս խաղաղապահների շրջանում տեղ գտած մեծաթիվ զոհերի կապակցությամբ:

Երկու օր անց նախագահ Սարգսյանը ցավակցություն հայտնեց նաև Միխեիլ Սահակաշվիլուն՝ վերականգնելով մի պահ խախտված հավասարակշռությունը և փաստելով առավելագույնս զուսպ ու չեզոք մնալու Հայաստանի պատրաստակամությունը:

Այն բանից հետո, երբ Ռուսաստանյան Դաշնությունը ճանաչեց Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը և նրանց հետ համապատասխան երկկողմ համաձայնագրեր ստորագրեց, հայ–ռուսական և հայ–վրացական հարաբերություններում ամենամեծ ինտրիգը դարձավ Հայաստանի կողմից այդ երկու կազմավորումների անկախության ճանաչման–չճանաչման խնդիրը: Ինտրիգը էլ ավելի էր մեծանում այն հանգամանքով, որ Հայաստանը, ստանձնելով ՀԱՊԿ նախագահությունը, այդ կարգավիճակով պետք է ներկայանար առաջիկա նիստին, որտեղ անդամ երկրներն իրենց դիրքորոշումը պիտի արտահայտեին արդեն ավարտված պատերազմական գործողությունների հանդեպ:

ՀՀ ԱԳ նախարար Նալբանդյանը մասնակցեց ՀԱՊԿ ԱԳ նախարարների հերթական նիստին, որի ժամանակ ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի նախագահությունը փոխանցվեց Հայաստանին: Բացի օրակարգի այլ հարցերի քննարկումից, խորհուրդն ընդունեց հայտարարություն, որով սատարում էր Ռուսաստանի Դաշնության դերը Կովկասում խաղաղությանը և համագործակցությանը նպաստելու հարցում: Սա, թերևս, հնարավոր ամենախելամիտ տարբերակն էր արձագանքելու հակամարտությանը, քանի որ անդամ երկրները, հավանություն տալով ռազմավարական դաշնակցի քայլերին, միաժամանակ խուսափում էին անդրադառնալ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչման հարցին. մի բան, որն ամենից ավելի ցավագին կերպով ազդելու էր հենց Հայաստանի վրա՝ որպես ՀԱՊԿ–ի անդամ միակ հարավկովկասյան երկիր:

Ինչպես հայտնի է, մինչև այսօր ամբողջ աշխարհում Ռուսաստանից բացի այդ երկու երկրների անկախությունը պաշտոնապես ճանաչել է միայն Նիկարագուան /Վենեսուելան թեև ողջունել է, սակայն պաշտոնապես չի ճանաչել/: Նույնիսկ ԱՊՀ երկրներից որևէ մեկը /Անգամ Բելառուսը/ առայժմ չի հետևել Ռուսաստանի օրինակին: Սակայն Հայաստանի պարագայում, եթե ճանաճելը կարող էր աղետալի վիճակի հասցնել հայ–վրացական հարաբերությունները, միաժամանակ որևէ ձևով չանդրադառնալը ինքնորոշվող ժողովուրդների պայքարին իր հերթին կարող էր տարակուսանք առաջացնել: Ուստի ընտրվեց անուղղակի մի ձև, այն է՝ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ողջունեցին Աբխազիայի և Հարավային Օսեթիայի

անկախության հռչակումը: Սա գուցե և համարժեք քայլ չէր, բայց ավելին էր քան ոչինչը:

Ի վերջո Վրաստանի դեպքերը ավելի ցցուն դարձրին այն խորը անհամապատասխանությունը, որ կա միջազգային իրավունքի նորմերի կիրառման և մեծ պետությունների տվյալ առանձին դեպքում ունեցած քաղաքական շահերի միջև: Մի կողմից, արդեն իսկ անկախացած Կոսովոյին գումարվող Աբխազիան ու Հարավային Օսեթիան կարծես թե ավելացնում են նախադեպերը Լեռնային Ղարաբաղի հնարավոր ճանաչման համար, դրանով իսկ ամրապնդելով հարցի իրավական կողմը, բայց մյուս կողմից, կարծես թե, շատ ավելի կոշտ ու անհանդուրժող են դառնում տարածաշրջանային դերակատարները նոր ինքնորոշումների կամ դե ֆակտո անկախ երկրներին միջազգային իրավունքի սուբյեկտ դարձնելու հարցում:

Դրա արտահայտությունն էր Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Լավրովի հատուկ կերպով ընդգծված արտահայտությունն այն մասին, որ Աբխազիան և Օսեթիան որևէ ձևով չեն կարող ծառայել իբրև նախադեպ Լեռնային Ղարաբաղի համար: Հիշենք, որ նույնանման արտահայտություններ եղան նաև Կոսովոյի հռչակումից անմիջապես հետո:

Օգոստոս–սեպտեմբերին Հայաստանի արտաքին քաղաքականության ամենաակտիվ ուղղություններից մեկն է դարձել Թուրքիայի հետ երկխոսությունը, իսկ ՀՀ նախագահի հրավերով Աբդուլահ Գյուլի այցը Հայաստան երկու երկրների միջև ֆուտբոլային խաղի առիթով երկար ժամանակ դարձավ թիվ 1 միջազգային լուրը Հայաստանի մասին:

Ինքը փաստը, որ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող Թուրքիայի նախագահը այցելում է Հայաստան, աննախադեպ էր, թեև Հայաստանի թե առաջին և թե երկրորդ նախագահները տարբեր առիթներով նախկինում այցելել էին այդ երկիրը: Այցի ունեցած մեծ արձագանքը բացատրվում է նաև ռուս–վրացական հարաբերությունների ներկա վիճակով և Կովկասում Թուրքիայի աճող դերակատարությամբ, որին ուշի ուշով հետևում են մեծ պետությունները: Բավական է նշել, որ եվրոպական գրեթե բոլոր կառույցներն ու պաշտոնական Վաշինգտոնը դրական, երբեմն նույնիսկ հիացական գնահատականներ տվեցին հայ–թուրքական մերձեցման այս երևույթին: Միջանկյալ ավելացնենք, որ Եվրոմիության անդամակցության համար պայքարող Թուրքիան իր կշռի ու հեղինակության բարձրացման նպատակով առաջին անգամ չէ որ ստանձնում է տարածաշրջանային միջնորդի դերը: Հիշենք թեկուզ Թուրքիայի բավական հաջող միջնորդությունը Սիրիա–Իսրայել հարաբերություններում:

Սեպտեմբերի 6–ին ֆուտբոլային խաղից առաջ կայացավ երկու նախագահների հանդիպումը Երևանում արտգործնախարարների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկված թեմաների վերաբերյալ չի եղել պաշտոնական հաղորդագրություն: Դատելով մամուլում եղած հրապարակումներից՝ հիմնականում խոսվել է երկու թեմաների՝ «Կովկասյան պակտի» և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին: Հենց այս հանդիպման ժամանակ որոշվեց ԱԳ նախարարների մակարդակով եռակողմ՝

Թուրքիա–Հայաստան–Ադրբեջան ձևաչափով հանդիպում կազմակերպել: Այն կկայանա այսօր Նյու Յորքում ՄԱԿ–ի Գլխավոր Վեհաժողովի 63–րդ նստաշրջանի շրջանակում Էդվարդ Նալբանդյանի, Էլմար Մամեդյարովի և Ալի Բաբաջանի միջև: Նախատեսվում է, որ մինչ այդ կկայանան Էդվարդ Նալբանդյանի առանձին հանդիպումները ադրբեջանցի և թուրք գործընկերների հետ: Նույն ժամանակ այստեղ են գտնվելու նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ դրանով իսկ կարծես շեշտելով Մինսկի խմբի շարունակականության հանգամանքը, որը վերջին շրջանում երբեմն կասկածի տակ է դրվում:

Բայց և այնպես պետք է ընդունել, որ եղածը լուրջ փոփոխություն էր Արցախի խնդրի կարգավորման արդեն 16–ամյա պատմություն ունեցող բանակցային գործընթացում: Երբ 1992 թվականին ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը, դրան մաս կազմող 10 երկրներից էր նաև Թուրքիան, որը հատկապես 1992–1994 թվականներին մյուս երկրներին հավասար դերակատարություն ուներ: Ապա 1994–1997 թվականների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները ի վերջո հանգեցրին այսպես կոչված եռանախագահության ձևավորմանը, որից հետո ԱՄՆ–ը, Ռուսաստանը և Ֆրանսիան սկսեցին հանգուցային դեր խաղալ միջնորդական ջանքերում, իսկ Մինսկի խմբի անդամ մյուս երկրներին, այդ թվում և Թուրքիային, ընդամենը տեղեկացնել գործընթացի վերջին զարգացումների մասին: Մինչդեռ այժմ Թուրքիան, եթե նույնիսկ չի հավակնում իրենով փոխարինել Մինսկի խումբը, համենայն դեպս

եռանախագահությունից հետո դառնում է չորրորդ լուրջ դերակատարը միջնորդական ջանքերում:

Թեև զեկույցը վերաբերում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումներին, սակայն չենք կարող համառոտ չանդրադառնալ նաև իշխող կոալիցիայի մաս կազմող Հայ Հեղափոխական Դաշնակցության, ինչպես նաև ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրեսի դիրքորոշումներին թե ռուս–վրացական հակամարտության և թե Թուրքիայի նկատմամբ:

Դաշնակցության դիրքորոշումը լավագույնս արտահայտվեց սեպտեմբերի 2–ին Լեռնային Ղարաբաղի անկախության օրվան նվիրված հանրահավաքում Վահան Հովհաննիսյանի ելույթով, որտեղ հնչեց հետևյալ կարծիքը. «Եթե Ջավախքը ստանար ինքնավարություն Վրաստանի կազմի մեջ, եթե հայկական համալսարան հիմնադրվեր Ջավախքում, եթե վրացական իշխանությունները այս քաղաքական ռազմավարությունը դրսևորեին Ջավախքի նկատմամբ, վստահեցնում եմ ձեզ և Ջավախքի իշխանություններին, որ նրանցից սարսափած, նրանցից պոկվելու ամեն տեսակի փորձ կատարած ժողովուրդներն անգամ, միգուցե սկսեին մտածել կոնֆեդերատիվ ընդհանուր Վրաստանում նոր բարգավաճման ուղիներ գտնելու մասին»:

Ռուս–վրացական հակամարտությանը և դրա հանդեպ Հայաստանի դիրքորոշմանն է անդրադարձել նաև Հայ Ազգային Կոնգրեսի առաջնորդ Լևոն Տեր–Պետրոսյանը իր օգոստոսի 20–ի մի հարցազրույցում: Վերապահումներով հանդերձ նա ընդհանուր առմամբ ընդունելի է համարում

Հայաստանի դիրքորոշումը այս հարցում. «...Դրական չեզոքությունը, թերևս, այն առավելագույնն էր, որ Հայաստանի կառավարությունը կարող էր դրսևորել երկու բարեկամ պետությունների միջև ծագած ռազմական հակամարտության նկատմամբ: Այս առումով Հայաստանի իշխանությունների դիրքորոշումից դժգոհելու հիմքեր չկան: Իսկ գործնականում Հայաստանի կառավարության կողմից պետք է արվեն և մասամբ արվում են իրավիճակից բխող որոշ քայլեր...»:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերություններին, ապա թե ՀՅԴ–ն և թե ՀԱԿ–ը դրական գնահատեցին Աբդոլահ Գյուլին ողղված Սերժ Սարգսյանի հրավերը: Սակայն հետագա գործելակերպը բոլորովին տարբեր էր: ՀՅԴ–ն պահանջատիրական պաստառներով բողոքի ցույցեր կազմակերպեց Զվարթնոց օդակայանում, ճանապարհներին և նախագահական նստավայրի մոտ, իսկ ընդդիմությունը անսպասելի որոշում ընդունեց դադարեցնել Հյուսիսային պողոտայում ընթացող նստացույցն ու հետաձգել սեպտեմբերի 5–ին նախատեսված հանրահավաքը:

Ընդհանուր գծերով անդրադառնանք նաև Հայաստան–Արևմուտք հարաբերությունների վրա ռուս–վրացական հակամարտության թողած ազդեցությանը: Այստեղ նկատված փոփոխությունը վերաբերում է առաջին հերթին Եվրոպայի խորհրդի և նրա Խորհրդարանական Վեհաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ ընդունած 1609 և 1620 բանաձևերի առաջարկությունների կատարման ընթացքին և դրանց տրված գնահատականներին:

Ընդհանրապես Հայաստանում ժողովրդավարության ու մարդու իրավունքների մակարդակի վերաբերյալ գնահատականներում զգալի տարբերություն էր նկատվում եվրոպական ու ամերիկյան պաշտոնյաների ելույթներում դեռևս նախագահական ընտրություններին հաջորդող ամիսներին: Եվրոպական կառույցները շատ ավելի զուսպ էին իրենց գնահատականներում, լուրջ քննադատության հետ մեկտեղ փորձելով առավելագույն չափով համագործակցել իշխանությունների հետ: Վրաստանի դեպքերից հետո այս մոտեցումը և Հարավային Կովկասում անկայունության նոր օջախ չստեղծելու մարտավարությունը կարծես ավելի տիրապետող դարձան:

Հուլիսի 22–23–ին, այսինքն դեպքերից ընդամենը երկու շաբաթ առաջ Հայաստան այցելեց և քաղաքական ղեկավարության հետ հանդիպումներ ունեցավ ԵԽԽՎ նախագահ Լուիս Մարիա դե Պյուչը: Հատկանշական էին նրա մոտեցումներն ու որոշ սուր արտահայտությունները, ինչպես օրինակ. «չի բացառվում, որ Հայաստանը լինի ԵԽ այն եզակի անդամը, որը դուրս մնա եվրոպական ընտանիքից», կամ որ Եվրախորհուրդը չի կարող հանդուրժել անդամ երկրներից որևէ մեկում քաղբանտարկյալների առկայությունը և այլն: Ճիշտ է, ադեն որոշված էր Հայաստանին ավելի շատ ժամանակ տրամադրել և բանաձևերի կատարմանն անդրադառնալ ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանում, բայց միաժամանակ Լուիս Մարիա դե Պյուչը ընդգծեց, որ եթե մինչև սեպտեմբեր 4–ի իր զեկույցը և մինչև սեպտեմբեր 11–ի ԵԽ Գլխավոր

հանձնակատարի զեկույցը չարձանագրվի դրական տեղաշարժ, ապա հետևանքները կարող են լինել «աղետալի»: Սա նախքան օգոստոսի 8–ը:

Իսկ արդեն վրացական դեպքերից հետո պատկերը փոխվեց: ԵԽԽՎ սեպտեմբերյան նիստին Հայաստանին վերաբերող զեկույցը ընդհանրապես օրակարգ չմտավ, քանի որ առաջին պլան մղվեցին վրացական դեպքերը, իսկ առանձին պաշտոնատարների արտահայտությունները Հայաստանի վերաբերյալ ընդհանրապես դրական երանգներ էին պարունակում, ինչի վրա, անկասկած, ազդել էին նաև հայ–թուրքական մերձեցման քայլերը:

Ընդհանուր առմամբ վերջին մեկ ամսվա ընթացքում նկատվում է հանդիպումների ու շփումների մեծ ինտենսիվություն ողջ տարածաշրջանում, որից անմասն չէ նաև Հայաստանը: Քննարկվում է նաև Հայաստանի և Ադրբեջանի նախագահների նոր հանդիպման կազմակերպման հնարավորությունը, որը կլինի երկրորդը հունիսի 6–ին Սանկտ Պետերբուրգում կայացած հանդիպումից հետո:

Ակնհայտ է, որ պաշտոնական Երևանի հետագա քայլերը արտաքին ոլորտում մեծապես կախված են լինելու Ռուսաստան–Արևմուտք և Ռուսաստան–Վրաստան արդեն իսկ լարված հարաբերությունների հետագա ընթացքից: Ոչ պակաս կարևոր դեր է ունենալու Կովկասում Թուրքիայի դերի մեծացումը և թուրքական նախաձեռնությունների, այդ թվում և «կովկասյան պակտի» հանդեպ մեծ պետությունների վերաբերմունքը: Վերջապես արտաքին քաղաքականության վրա անխուսափելիորեն ազդելու է նաև երկրի ներքին

կյանքի հետագա ընթացքը, որը փոխկապակցված է տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունների հետ:

Մի կողմից, վրացական դեպքերը ժամանակավորապես մեղմացրին ներքին քաղաքական պայքարը, մյուս կողմից, ակնհայտ է, որ ցանկացած լուրջ փոփոխություն ներքին քաղաքական դաշտում իր անդրադարձն է ունենալու նաև արտաքին քաղաքականության մեջ:

ГЛОБАЛЬНЫЕ ЦЕНТРЫ: ПРИНЦИПЫ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ И ПРАВА НАЦИЙ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

Давид Петросян

Конец уходящего и начало нового столетия преподнесло много сюрпризов. Крах или временное отступление коммунизма в Восточной Европе и СССР привели к падению двухполюсной системы, возникшей после Второй мировой войны, и, несомненно, уменьшили риск возникновения третьей мировой войны. Новые конфликты регионального характера, получившие отклик в остальном мире, тем не менее, включили международное сообщество в процесс решения неожиданных, необычных проблем – будь то в бывшей Югославии, в Персидском заливе либо на Кавказе вообще и в Нагорном Карабахе - в частности. Эксперты со все большим и большим беспокойством обсуждают непредсказуемость ситуации на рубеже веков, или ту угрозу человечеству, которую Самуэль Хантингтон назвал "столкновением цивилизаций", разделенных этнокультурными барьерами. Становится все более ясным, что падение советской системы никоим образом не стало "концом истории", предсказанный Фукуямой, а скорее отражает появление новых действующих лиц на исторической сцене либо возвращение на сцену старых игроков, прошедших некий трансформационный период.

В свете противоречия принципов территориальной целостности и права наций на самоопредление, которое реализуется обычно в многонациональных государствах, последние могут быть организованы в соответствии с тремя основными моделями:

1). ***Унитарное государство***: система, основанная на экономической взаимозависимости регионов, тоталитарной идеологии и военной силе. Наибольшая нация и ее религия обычно господствуют, в то время как меньшинства подавлены или ограничены в своей культурной

активности (например, СССР, Югославия, Китай). По мере экономического и военного ослабления государства и утраты влияния правящей партии и ее главенствующей идеологии на массы нарастающие центробежные тенденции могут привести к дезинтеграции государства и появлению новых наций-государств. (Под *нацией-государством* или просто *нацией* в англо- и франкоязычной литературе принято понимать совокупность граждан какого-либо конкретного государства).

2). ***Асимметричная федерация***: союз народов и/или регионов, обладающих широким самоуправлением, контролем над своими природными ресурсами и такими правами, как проведение собственной образовательной и культурной политики, установление уголовного законодательства, введение местных налогов и так далее. Некоторые из этих народов и/или регионов могут обладать привилегией передачи [обязанностей, функций] или местного самоуправления, в то время как другие могут присоединяться к федерации на основе особых соглашений, отраженных двусторонними договорами, в качестве ассоциированных членов (например, Аландские острова в Финляндии, Пуэрто-Рико и Виргинские острова в США, или Татарстан в России). Есть основания верить, что гибкое членство может сделать многонациональные федерации более жизнеспособными и позволит достичь большей однородности в основных направлениях экономики и политики.

3). ***Симметричная федерация, или конфедерация:*** это устройство не имеет какого-либо специального статуса даже для регионов с ярко выраженными специфическими этнокультурными характеристиками, но разрешает широкую автономию для частей многонационального государства. Наиболее близкими к данному типу в настоящее время являются Швейцария и Испания.

Первые два типа многонациональных государств обычно связаны с различными стадиями развития и коллапса колониальной системы. Напомним, что в бывшем СССР:

- на государственном уровне осуществлялись массовые депортации и этнические чистки;
- была установлена субординация одних народов по отношению к другим;
- власти часто влияли на массовые миграции между республиками под предлогом осуществления грандиозных экономических проектов;
- границы между республиками часто менялись произвольно, без учета мнения населения по обе стороны границы.

Эта полностью несправедливая система поддерживалась военной силой до развала империи после краха коммунизма, и в наше время она повсеместно лишена доверия. Союзные республики, имевшие право на отделение, после августовского переворота 1991 года не стали откладывать реализацию этого права. Однако народы автономных территорий, занимавшие более низкую позицию в советской иерархической системе, чувствовали себя ограниченными в правах, особенно если они находились под властью другой этнической группы, несмотря на долгую борьбу за изменение своего статуса. Отсюда и конфликты в нашем регионе между квазиметрополиями – Азербайджаном и Грузией и их советскими автономными провинциями, которые подняли мятежи: Нагорный Карабах, Абхазия и Южная Осетия.

В то время как молодые государства стремятся утвердить свою государственность на исторической арене, более признанные государства, которые давно заняли свое место на Олимпе международных организаций, реагируют на принцип самоопределения с крайней подозрительностью. Лидеры многих этих государств, кажется, забыли, что их собственные страны пребывали в восторге от достижений собственного самоопределения через отделение от империй прошлого (классический пример представляют США, которые время от времени призывают бороться против сепаратизма, хотя американцы очень неплохо помнят о том, что чуть более 200 лет назад они были такими же сепаратистами, как, например, Абхазия,

Нагорный Карабах и Южная Осетия, и пользовались весьма и весьма последовательной поддержкой Франции в деле достижения свой независимости от Британской Империи). Очевидно, некоторые правительства полагают, что современная политическая карта мира отражает идеальную и полностью реализованную общую конфигурацию, в которой не имеет смысла что-либо менять.

Действия глобальных центров по вопросу соблюдения принципа права наций на самоопределение или территориальной целостности не отличались последовательностью в течение предыдущего века и века нового. Идея, что "народы" или этнические группы имеют "право на самоопределение" переживала подъемы и падения. Пики ее реализации пришлись на период крушения полиэтнических империй Евразии: российской/советской, Австро-Венгерской и Османской. Крушению этих империй способствовали мировые и холодные войны. Однако с 1945 г. силы того, что называется "международным сообществом" твердо держали эту "неудобную" идею под контролем, пытаясь ограничить использование термина "самоопределение" лишь для специфического контекста деколонизации третьего мира (сохраняя при этом границы, проведенные колониальными властями). Их предпочтением является относительный порядок и стабильность мировой системы, основанной на суверенитете и территориальной целостности существующих государств. И целых 40 лет существующие государства, за очень малым исключением, действительно оставались неизменными внутри унаследованных ими границ.

В целом, проводя политику признания/непризнания тех или иных государственных образований, глобальные центры руководствуются здоровым прагматизмом и своими интересами (геополитическими, экономическими/энергетическими, военными и пр). Благо что международное право достаточно противоречиво в этих вопросах. Напомним, что практические трудности реализации принципа самоопределения воспрепятствовали включению его в окончательный текст послевоенного Устава Лиги Наций. В принципах Декларации о предоставлении независимости колониальным странам и народам ГА ООН

1960 года ясно говорится, что отказ в предоставлении свободы или создание препятствий на пути к свободе народов ведет к усилению конфликтов. В свою очередь, Заключительный акт Конференции по безопасности и сотрудничеству в Европе, принятый в Хельсинки в 1975 году, равным образом не снимает противоречия между двумя принципами. Они оба присутствуют в Заключительном акте, но в конце документа подчеркнуто, что все его разделы имеют одинаковую силу.

Так, **США и Европейский Союз (прежде всего Германия),** проводя политику дробления большого и сильного в военном отношении государства Югославия, намеренно отдали приоритет праву наций на самоопределение. При этом при признании независимости того же Косово активно использовалось определение геноцида в отношении жертвы (в данном случае косоваров). В то же время в Ираке мы видим прямо противоположный подход – несмотря на наличие убедительных фактов геноцида против курдов со стороны Багдада и их вполне легитимному стремлению к отделению и созданию собственного государства, западные силы сознательно резко прекратили поддерживать сецессию. Дело в том, что независимое курдское государство представляло бы угрозу территориальной целостности не только Ирака, но также и Ирана, Сирии, а самое главное - союзной американцам Турции. В других точках мира, например, на Тайване, американцы демонстрируют полную поддержку сепаратистам, а в Боливии продемонстрировали готовность инспирировать гражданскую войну между различными регионами этой латиноамериканской страны. В принципе, являясь единственной в мире супердержавой и опираясь на исключительную военную и экономическую мощь, США могут выступать практически в любой точке мира как региональная держава. Не считаться с этим нельзя. Однако на стыке интересов с другими крупными игроками США стараются быть более осторожными. Так, судя по всему, Вашингтон санкционировал М.Саакашвили на проведение политики поддержания напряженности в зоне грузино-абхазского и грузино-югоосетинского конфликтов, поддерживая его политику отказа от переговоров в существующих форматах, где Россия

доминировала как посредник. Однако М.Саакашвили переусердствовал либо неправильно понял патрона. В результате произошла разморозка конфликта, но США не пожелали вступить в открытое столкновение на стороне Грузии против ядерной державы.

Поведение **Китая** на международной арене в вопросах, связанных с правом наций на самоопределение, достаточно консервативно, может быть консервативнее других постоянных членов СБ ООН. Пекин обычно поддерживает принцип территориальной целостности в конфликтах и не любит обращаться к праву наций на самоопределение. Отчасти это связано с тремя болезненными точками у самого Китая: кроме вышеупомянутого Тайваня, это Тибет и Синьзян-уйгурский автономный район (СУАР). В вопросе своих бывших территорий - Гонконга и Макао, которые долгие годы были колониями Великобритании и Португалии, Пекин проявлял сдержанность и гибкость в переговорах со своими партнерами. В отличие от США, Китай не поддерживает сепаратизм в соседних государствах и для достижения своих целей чаще использует экономическую экспансию и демпинг, а также инфильтрацию китайцев и не только на сопредельные территории. В последнее время проглядывается и использование политических приемов (парламентские выборы в Непале). В регионе Южного Кавказа Китай также использует свои традиционные рычаги. Об этом свидетельствует возрастающая после вывода российских военных баз численность китайской общины в Грузии (по разным данным от 40 до 60 тысяч человек).

Если говорить о **России**, то ее отношение к праву наций на самоопределение также не было и не является последовательным. В первой половине 90-ых на постсоветском пространстве она больше симпатизировала бывшим автономиям в их борьбе против квазиметрополий, при этом исправно поставляла оружие обеим противоборствующим сторонам. На Балканах она была на стороне сербов, которые хотели бы сохранить единство Югославии, где они наряду с хорватами были одной из главных титульных наций. Затем наступил период двух чеченских войн, где Россия последовательно защищала принцип территориальной целостности,

одновременно подписав Хасавюртовский договор 1996 года, который де-факто давал Чечне очень широкие политические и экономические возможности, которыми она не сумела воспользоваться. В феврале Москва последовательно защищала международное право в вопросе Косово, и это была прелюдия к тому, что в настоящее время можно констатировать более прагматичную российскую политику в этих вопросах. Сдача Южной Осетии и Абхазии стала бы демонстрацией слабости России как внутри СНГ, так и внутри самой РФ, в особенности если учесть связи Северной и Южной Осетии, взаимовлияние осетино-ингушского и осетино - грузинского конфликта, а также моменты, связанные с Адыгеей, Карачаево-Черкессией и Кабардино-Балкарией. Российская дипломатия начала последовательно копировать косовскую модель применительно к Абхазии и Южной Осетии. С началом пятидневной войны Москва использовала весь идеологический арсенал США и их союзников для легитимации военной операции по «принуждению Грузии к миру».

Как полагает известный российский эксперт С.Маркедонов, после пятидневной войны у Москвы был не слишком великий выбор. Первым вариантом был бы поход на Тбилиси, оккупация Грузии, втягивание в проблемы недружественного образования, масштабный конфликт со всем постсоветским миром и Западом. Вторым мог бы стать процесс длительного убеждения Запада в том, что Абхазия и Южная Осетия действительно не могут находиться в составе Грузии. Третьим могла быть попросту «капитуляция» в первый день пятидневной войны (о последствиях этого сценария мы уже писали выше). Российское руководство выбрало четвертый вариант - признание независимости двух бывших автономий Грузии. Это было сделано тогда, когда все миротворческие форматы прекратили свое существование (прежде всего по вине грузинской власти).

Не желая, оставаться в изоляции и внутри Евразии, и в мире, Москва пытается сформулировать тезис об «уникальном самоопределении». В миротворческих же форматах (Приднестровье, Нагорный Карабах) есть возможности доказать Западу конструктивность российских подходов. А потому Сергей Лавров предлагает следующую формулу:

«Признание Россией независимости Южной Осетии и Абхазии стало единственно возможным решением для обеспечения не только безопасности, но и самого выживания наших братских народов перед лицом шовинистической угрозы Тбилиси». Пока Москва не видит исключительности в других «горячих» или в остывших точках. Кремль заинтересован в нейтральной и пророссийской Молдове (на это шансы сохраняются) и как минимум в невраждебном Азербайджане.

Если говорить о политике ЕС в вопросе права наций на самоопределение и территориальной целостности государств, то следует напомнить, что в 1991 году европейцы приняли свод критериев, согласно которым они договорились признавать независимость государств, и этот свод в общем-то не выполнялся не только при расчленении бывшей Югославии, но и при признании независимости Косово. Затяжка времени с решением статуса Косово- это новые тысячи албанских иммигрантов в Вене, Риме, Берлине, Милане. Среди этих иммигрантов немало людей с низким образовательным уровнем, но высоким уровнем криминальных связей и принципами круговой поруки, базирующейся на крепких семейных связях. Таким образом, чтобы не потакать процессам формирования маленьких «государств в государстве» внутри ЕС, европейские политики и дипломаты решили ускорить признание Косово. Тогда в Приштине появляется своя (признанная широко в Европе и за океаном) бюрократия, дипломатический корпус, полиция. Для всей этой чиновничьей братии из числа бывших полевых командиров создаются рабочие места, которые становятся выгодным бизнесом, способным удержать от миграции большое число албанцев (так как о семьях и родне министры и дипломаты позаботятся). Циничный подход, но работающий. Таким образом, за внутреннее спокойствие ЕС готово заплатить фактически налог за стабильность. Следует, однако, учесть то обстоятельство, что европейская политика в этом вопросе никогда не была консолидированной, особенно если принять во внимание наличие проблемных регионов у Испании, Бельгии, Румынии, Франции и других стран. Интересно, что при дискуссиях о возможности признать те или иные субъекты, претендующие на государственную

независимость, европейцы обожают говорить о недопустимо малой территории того или иного образования или незначительной его численности, при этом игнорируя наличие большого числа карликовых государств - от Сан-Марино до Андорры.

Если говорить о других крупных центрах силы, то мы кратко остановимся лишь на **Индии** и **Японии**.

Индия, имея уже более 60 лет проблему Кашмира, проявляет традиционную сдержанность в вопросах поддержки сепаратизма и изменения государственных границ. Однако так бывает не всегда: достаточно вспомнить сецессию Бангладеш от Пакистана или голосование мартовской резолюции на ГА ООН, где говорилось о территориальной целостности Азербайджана.

Что касается Токио, то там внимательно отслеживают политику России относительно непризнанных государств и межэтнических конфликтов вообще, примеряя все действия Москвы к «проблеме Северных территорий». Еще в 80-ые годы японцы говорили о том, что политика Москвы по вопросу Нагорного Карабаха имеет принципиальное значение для Токио.

В заключение приведем возможные критерии самоопредления, подготовленные Г.Старовойтовой. Это ***невыносимость существования, историческое право, этнический состав населения, народное волеизъявление и ответственность за последствия.***

Не претендуя на представление полного перечня возможных критериев установления законности требований о самоопределении, автор попытался определить некоторые из них, не забывая, что произвольно выбранные один или два критерия не будут отвечать требованиям законности, а ***лишь все критерии в совокупности***, что встречается редко в отдельных странах мира. Например, в Нагорном Карабахе.